7 ՓԵՏՐՈՒԱՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 21(4873)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Իրանը կհարվածի նախահարձակմանը նպաստող «ամեն մի երկրի»

*Սկսվել են ռազմածովային զորավարժություններ*

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի փոխհրամանատար, գեներալ **Հուսեյն Սալամին** հայտարարել է, որ Իրանը կհարվածի «ամեն մի երկրի, որը սեփական տարածքը կտրամադրի հակաիրանական նախահարձակման իրականացմանը»:

Իրանական Ֆարս գործակալությունը տարածել է նաեւ կորպուսի ցամաքային զորքերի հրամանատար **Մոհամմեդ Պակպուրի** հայտարարությունը: Բրիգադային գեներալ Պակպուրը մասնավորապես ասել է, որ Իրանը թեեւ մտադիր չէ առաջինը պատերազմ սկսել, բայց նախահարձակմանն ի պատասխան՝ կհասցնի «խորտակիչ հարված»: Նա ավելացրել է, որ իրանական բանակի պատասխանը կլինի «սրընթաց»:

Պակպուրը ընդգծել է, որ Իրանի դեմ ուղղված նույնիսկ ամենաաննշան հարձակողական գործողությունը կստանա «անչափ վճռական հակահարված», իսկ նախահարձակի շահերը վտանգի կենթարկվեն ողջ աշխարհում:

Բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ, բրիգադային գեներալ Աբդոլռահիմ Մուսավին իր հերթին հայտարարել է, որ Իրանի օդուժը պատրաստ է հետ մղել ամեն մի հարձակում: Press TV հեռուստաալիքը մեջբերում է նրա այն խոսքերը, որ օդուժը վերջին տարիներին խփել է երկրի օդային տարածք ներխուժած անհայտ ծագումով մի քանի թռչող սարքեր:

Ի դեպ, իրանական ծովուժը փետրվարի 5-ից զորավարժություններ է սկսել Հորմուզի նեղուցի շրջանում: Ծրագրված զորավարժությունները կտեւեն մեկ ամիս:

# Քլինթոն. ԼՂ հարցի կարգավորումը՝ բացառապես խաղաղ ճանապարհով

Միացյալ Նահանգների պետքարտուղար **Հիլարի Քլինթոնը** վերահաստատել է ԱՄՆ դիրքորոշումը, որ հիմնախնդրի կարգավորումը հնարավոր է բացառապես խաղաղ ճանապարհով: Այս մասին Քլինթոնը հայտնել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպմանը, որ տեղի է ունեցել փետրվարի 4-ին Մյունխենում, որտեղ Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը փետրվարի 3-4-ը մասնակցել է Մյունխենի՝ անվտանգության հարցերով 48-րդ համաժողովին:

ԱԳՆ հաղորդագրության համաձայն, Նալբանդյանը, անդրադառնալով երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների՝ այս տարի նշվող քսանամյակին, ասել է. «Այս հոբելյանական տարում կարելի է արձանագրել՝ համատեղ ջանքերով Հայաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ գործընկերությունը գտնվում է հայ-ամերիկյան հարաբերությունների պատմության մեջ ամենաբարձր մակարդակի վրա»:

Հայաստանի եւ ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները հանգամանալից քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի վերջին զարգացումները: Էդվարդ Նալբանդյանը կարեւորել է ԱՄՆ-ի՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի դերակատարությունը եւ իր ամերիկյան գործընկերոջը ներկայացրել է հունվարի 23-ին Սոչիում տեղի ունեցած Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման արդյունքները:

Ղարաբաղյան կարգավորման առումով պետքարտուղար Քլինթոնը նշել է, որ ԱՄՆ-ն, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, շարունակելու է իր լիակատար աջակցությունը հակամարտության կողմերի միջեւ համաձայնությունների ձեռքբերմանը եւ հիմնախնդրի հանգուցալուծմանը:



Քլինթոնը մյունխենյան անցուդարձի ընթացքում հանդիպել է նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին: Հանդիպման առնչությամբ պաշտոնական հաղորդագրությունը միայն տեղեկացնում է, թե կողմերը մտքեր են փոխանակել ղարաբաղյան հարցի առնչությամբ: Ակնհայտ է, որ ադրբեջանական կողմը որեւէ կերպ չի ցանկացել որեւէ մանրամասն հրապարակել այն դեպքում, երբ Նալբանդյանի հետ հանդիպման մասին ավելին է հաղորդվում:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Թուրքիան խստացրել է միգրացիոն օրենսդրությունը

Թուրքիան այնպիսի փոփոխություններ է արել իր միգրացիոն օրենսդրության մեջ, որը դժվարություններ է առաջացնում օտարերկրացիների համար: Մինչեւ օրենքի փոփոխությունը օտարերկրացիները կարող էին կեցության եռամսյա ժամկետը լրանալուց հետո հատել սահմանն ու վերադառնալ մեկ օրում՝ եւս երեք ամսվա կեցության ժամկետի համար մուտքի իրավունք ստանալով: Այդ ճանապարհով Թուրքիայում բազմաթիվ օտարերկրացիներ, այդ թվում՝ հայեր են աշխատում: Սակայն այժմ օրենսդրությունը խստացվել է՝ եւ փետրվարի 1-ից երեք ամիս Թուրքիայում լինելով՝ օտարերկրացիներն անմիջապես չեն կարող նոր երեք ամսվա համար մուտքի արտոնագիր ստանալ, այլ պետք է երեք ամիս սպասեն ու հետո դիմեն մուտքի արտոնագրի համար: Կարգը խախտողները եւ երեք ամսից ավելի անօրեն մնացողները մեծ տուգանքներ պետք է վճարեն, որը սպասարկող ծառայություններում եւ տներում աշխատող հայերը, վրացիները եւ մյուս ազգերի ներկայացուցիչները չեն կարող վճարել, քանի որ նրանց վարձատրությունը շատ ցածր է: Այնպես որ, ըստ թուրքական լրատվամիջոցների՝ Վրաստան, Հայաստան, անգամ Ադրբեջան վերադարձողների թիվը վերջին օրերին կտրուկ ավելացել է, քանի որ այն մարդիկ, ում կեցության եռամսյա ժամկետը լրացել է, վախենում են մեծ տույժեր վճարելուց: Փաստորեն՝ Թուրքիան, միգրացիոն քաղաքականության խստացման անվան տակ, հրագործում է օտարերկրացիներին, այդ թվում՝ հայերին, վտարելու իր խոստումը: Թուրքիայի տուրիզմի նախարարությունն արդեն քննադատել է այս փոփոխությունները՝ նշելով, որ դրանք խփում են տուրիզմին, այդպիսով նաեւ Թուրքիայի գրպանին:

**Մ. Խ.**

# Երկու զոհ բանակում

**Պաշտպանության նախարարության ֆինանսական ծառայության փոխանցմամբ՝ Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային (Հորադիզ) պաշտպանական ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում մահացու վերք ստացած, 1992 թ. ծնված զինծառայող Կառլեն Բաղդասարյանի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով:**

**Ժամկետային զինծառայող Կառլեն Բաղդասարյանը հրազենային մահացու վիրավորվել էր փետրվարի 2-ին, ժամը 17.00-ին: Ստեփանակերտի զինկոմիսարիատից զորակոչված ՊԲ ժամկետային զինծառայողը մահացել էր զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին:**

**ԼՂՀ ՊԲ-ից հայտնում են, որ փետրվարի 5-ին ժամը 19.20-ի սահմանում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավարեւելյան (Հադրութի) պաշտպանական ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հրազենից մահացել է 1992-ին ծնված, ՊԲ ժամկետային զինծառայող Մարաս Դիմաքսյանը: Զինվորը մահացել է զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին: Համաձայն ՊՆ հաղորդագրության՝ զորամասի մարտական դիրքում, նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Գոռ Ալավերդյանը, խախտելով իրեն ամրակցված ինքնաձիգի հետ վարվելու կանոնները, կրակոց է արձակել եւ աջ ուսազոտու շրջանում հրազենային վերք հասցրել ժամկետային զինծառայող Մարաս Դիմաքսյանին: Հարուցվել է քրեական գործ զենքի, ռազմամթերքի եւ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հատկանիշներով: Գոռ Ալավերդյանը երեկ մինչեւ երեկո դեռեւս ձերբակալված չէր:**

**Հ. Հ.**

# «Գայլի հետ գառը ուտում, տիրոջ հետ ողբում են»

*Ադրբեջանական վերնախավի երկերեսանիությունը*

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Երկերեսանիությունը ազգայի՞ն, թե՞ անհատական հատկանիշ է: Դժվար է միանշանակ պատասխանել: Մի բան ակնհայտ է. Ադրբեջանի կառավարող վերնախավը երկերեսանի է: Դրանում համոզվելու համար հարկ չկա դիմելու մարդաբանական ուսումնասիրությունների: Բավական է հետեւել այդ երկրի «պատասխանատու» լրատվամիջոցների հրապարակումներին:

Տառացիորեն մեկ-երկու շաբաթ առաջ, երբ Բաքվում նշվում էր «սեւ հունվարի» հերթական տարելիցը, այնտեղ գրեթե բոլորը միաբերան պնդում էին, որ «Խորհրդային Միության հոգեվարքն սկսվել է բռնապետության դեմ ադրբեջանական ժողովրդի ցասումնալի բողոքներից»: Իշխանությունները հրահանգավորել էին, որ պետք է «նույնանալ» մերձբալթյան եւ վրացական ժողովրդավարական շարժումների հետ, եւ մամուլը, վերլուծաբաններն ու քաղաքագետները հանդես էին գալիս այդ «փաթեթավորմամբ»:

Այսօր Բաքվում, ըստ երեւույթին, կարծում են, որ կոնյունկտուրան փոխվել է. Պուտինը վերադառնում է Կրեմլ եւ առաջադրում եվրասիական ինտեգրման նպատակ: Եվ ահա vesti.az-ը հարցազրույց է ունենում ՌԴ ԱԳՆ Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի գիտական գծով պրոռեկտոր Ալեքսեյ Պոդբերեզկինի հետ: Այն վերնագրված է . «Եվրասիական միություն. ղարաբաղյան հակամարտության կարգավորման իրական ճանապարհը»:

Ոչ, դա ադրբեջանական լրատվամիջոցի հնարածը չէ: Այդպես կարծում եւ խորհուրդ է տալիս Ալեքսեյ Պոդբերեզկինը: Բաքվի քարոզչամիջոցի «հայտնագործությունը» հետեւյալ հարցն է. «Լեւադա-կենտրոնի անցկացրած սոցիոլոգիական հարցման արդյունքներով ՌԴ բնակչության 60 տոկոսն ափսոսում է ԽՍՀՄ փլուզման համար: Իսկ գիտե՞ն այդ մարդիկ, որ ղարաբաղյան հակամարտությունը, ավելի ճիշտ՝ հայ անջատողականների գործողություններն են ԽՍՀՄ կործանման սկիզբը դրել», ինչին հետեւում է Իլհամ Ալիեւի «ավարտած» բուհի պրոռեկտորի պատասխանը.

Տես էջ 8

# Հայկ Գեւորգյանին կալանավայրից բաց թողեցին

Երեկ կեսօրին, երեք օր «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում անցկացրած «Հայկական ժամանակ» օրաթերթի թողարկման պատասխանատու, լրագրող Հայկ Գեւորգյանին կալանավայրից բաց թողեցին: Դատախազության որոշմամբ Հայկ Գեւորգյանի խափանման միջոցը կալանքից փոխվեց երկրից չբացակայելու ստորագրության: Լրագրողները Հայկին «Նուբարաշեն» ՔԿՀ-ի մուտքի մոտ ողջունեցին ծափերով ու սկսեցին գրկախառնվել: Ի դեպ, խափանման փոխելու որոշումը կայացրել է դատախազը, նշելով. «Հաշվի առնելով հանրության հետաքրքրությունը, նկատի ունենալով, որ Հ. Գեւորգյանը մեղադրվում է ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու մեջ, նախկինում դատապարտված չի եղել, ունի մշտական բնակության վայր, նման պայմաններում բացակայում է նրան կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը»: Որոշման պատճենը ուղարկվել է ՔԿՀ-ի պետին, եւ Հայկ Գեւորգյանին բաց են թողել:




Ինչպես «**Ազգին**» պատմում էր Հայկը, կալանավայրում իր նկատմամբ բռնություն չի կիրառվել, բանտում անցկացրել է «երեք հրաշալի օր», շփվել ութ տարբեր տիպի մարդկանց հետ, որոնց մասին առաջիկայում գրելու է: Իսկ դեպքի մանրամասները չցանկացավ ասել, մտավախություն ունենալով, որ իր պատմածներից ոստիկանությունը կարող է օգտվել:

Հուսանք, որ «տուժած» քաղաքացին ավելի ուշ կխոստովանի ավտոմեքենայի հետնամասում հայտնվելու իր հանգամանքները, նաեւ՝ թե ինչու կենտրոնում գործող երեք բուժհիմնարկները թողած, հասել է Նոր Նորքի հիվանդանոց, մի քանի օր պառկել ու հետո դուրս գրվել:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

Ընթացիկ

# Ազգային ժողովում կառավարության հեղինակած օրինագիծը չանցավ

Որոշ կարգեր, այնուամենայնիվ, Ազգային ժողովի նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանից մնացել են, օրինակ՝ աներեր «բաց դասը», որին երեկ, Ազգային ժողովի աշնանային նստաշրջանի բացմանը մասնակցում էին այս անգամ ԵՊՃՀ երիտասարդ գիտնականները եւ ուսանողները: Նստաշրջանի օրակարգ հաստատելն էլ նման էր նախորդ նստաշրջանների օրակարգ հաստատելուն, երբ երկու ընդդիմադիր խմբակցություններից մեկը («Ժառանգությունը») միշտ բարձրացնում է ԱԺ մեծ օրակարգում հայ-թուրքական արձանագրությունները պահպանելու նպատակահարմարության հարցը, մյուսը (ՀՅԴ-ն) արդեն որերորդ անգամ նշում է, որ երկար ժամանակ ԱԺ կանոնակարգ է խախտվում եւ չի քննարկվում «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը զինված հակամարտության վերածելու, էությունը նենգափոխելու եւ խաղաղ բանակցային գործընթացին խոչընդոտելու Ադրբեջանի պատասխանատվության մասին» նախագիծը (հեղ.՝ Արմեն Ռուստամյան): Այս հիշեցումներին Ս. Նիկոյանը հնչեցրեց մոտավորապես նույն պատասխանները, ինչ նախորդ նախագահն էր հնչեցնում (մի քիչ ավել-պակաս): Անգամ գլուխները հաշվելու մասին նույն հաշվարկը նույն ձեւով արեց Անահիտ Բախշյանը՝ գրանցվել է 101, բայց պակաս գլուխ է ներկա՝ իրենն էլ հետը:

Անցած նստաշրջանից մնացած քվեարկություններ կային, դրանք էլ քվեարկվում էին, բայց դրանցից մեկը պարզապես չանցավ՝ անհրաժեշտ 66 ձայնը չհավաքեց՝ քաղաքական ենթատեքստեր փնտրողներին ենթադրությունների առատ նյութ մատուցելով: Բայց չանցածը ոչ թե շարքային օրենք էր, այլ կառավարության նախաձեռնածը, եւ ինչպես ՀՀԿ-ականներն էին պնդում՝ հակակոռուպցիոն բնույթի: Դա կառավարության հեղինակած «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» օրենսդրական փաթեթն էր, որը մտածված է նրա համար, որ սահմանափակի մեծ գումարների կանխիկ գործառնությունները, այդպիսով նաեւ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը եւ ստվերային շրջանառությունը: Այս փաթեթով սահմանվում էր, որ 3 մլն դրամից ավելի գործառնությունները կամ 300 հազար դրամը գերազանցող բժշկական վճարումները քաղաքացիները կամ իրավաբանական անձինք պետք է կատարեն բանկերում: Սակայն քվեարկության ժամանակ պարզ դարձավ որ ընդամենը 51 պատգամավոր է կողմ այս նախաձեռնությանը, իսկ օրենքն ընդունելու համար 66 ձայն էր պետք: Ազգային ժողովի նախագահը օրինագիծը նորից քվեարկության դրեց՝ տեխնիկական խնդիրներ մատնանշելով՝ թեեւ ընդդիմադիր պատգամավորներից մեկը (Լարիսա Ալավերդյանը) նրան զգուշացնում էր, թե վերաքվեարկությունը ճնշման ձեւ է պատգամավորների վրա: Բայց վերաքվեարկությունը եւս կայացավ, ու այս անգամ էլ երկու կամ երեք «կողմ» ձայն ավելացավ ընդամենը: ԲՀԿ-ն չէր քվեարկում, քանի որ գաղափարին կողմ լինելով՝ ԲՀԿ-ականները դեմ էին այս տեսքով օրենքի ընդունմանը: ՀՅԴ-ն ձեռնպահ էր քվեարկում, քանի որ փաթեթում նրանց համար անհասկանալի խնդիրներ էին մնացել:

Ու թեեւ ԱԺ ՀՀԿ-ական ղեկավարներ Ս. Նիկոյանը, Է. Շարմազանովը հայտարարում էին, որ օրենքը հակակոռուպցիոն ուղղվածության է, սակայն գնացքն արդեն գնացել էր: «Օրենքի նպատակը հակակոռուպցիոն է՝ խոշոր կապիտալի հրապարակային շրջանառության ապահովում, հարկերի հավաքագրում, ստվերի դեմ պայքար, եւ յուրաքանչյուր քաղաքական ուժ , ով խոսում է ժողովրդի անունից, հարկերի հավաքման արդարությունից եւ այդ խնդիրներով վաղը ժողովրդի առջեւ կուրծք է ծեծելու՝ պետք է ապացուցեր (քվեարկությամբ-Մ.Խ.) իր գործի ու խոսքի նույնությունը», ասում էր Է. Շարմազանովը՝ այդպիսով համարելով, որ խմբակցությունները կոռուպցիայի դեմ պայքարի հարցում այդ քվեարկությամբ իրենց դիրքորոշումը ներկայացրին:

ԱԺ ԲՀԿ-ական փոխնախագահ Սամվել Բալասանյանն իր արձագանքում նշեց, թե իր խմբակցությունը օրենքին դեմ չէ, բայց հասարակության համար դեռ այսպիսի օրենքի ընդունումը շուտ է ու այդ տեսակ ծառայությունների համար պետք չէ, որ բնակչությունը բանկերին գումարներ փոխանցի: Այսինքն՝ մատնանշվում էին կորպորատիվ շահեր՝ կոնկրետ դեպքում՝ բանկերի: Ֆինանսաբյուջետային հանձնաժողովում քննարկումներին էլ ԲՀԿ-ի տեսակետը ներկայացվել է:

Մինչդեռ ՀՀԿ-ականներ Գագիկ Մինասյանը, Արեգ Ղուկասյանն էլ իրենց խոսքում նշեցին, թե խմբակցությունները փաստորեն դեմ եղան հակակոռուպցիոն օրինագծին, ՕԵԿ խմբակցության ղեկավար **Հեղինե Բիշարյանն** էլ առաջարկում էր այսօր մեկ անգամ եւս փաթեթը վերաքվեարկել:

Ասենք, որ ԱԺ նախագահը ընդմիջմանը իր տեսակետը, որ ասել էր ԱԺ ամբիոնից, նաեւ կրկնեց լրագրողների համար՝ նշելով, թե իր համար անհասկանալի է կոալիցիոն գործընկեր ԲՀԿ-ի մոտեցումը, քանի որ կոալիցիոն կառավարություն է կազմվել, միասին աշխատել են այսքան տարի. «Ունեցել ենք խնդիրներ՝ քննարկել ենք, բայց պետության համար կարեւոր այս նախագծի հարցում նման դիրքորոշումը, այսինքն՝ բոյկոտելն ինձ համար անհասկանալի է: Կառավարությունը կոլեգիալ մարմին է, որի կազմում են նաեւ մեր գործընկեր ԲՀԿ-ի նախարարները. չեմ լսել, որ նախարարները դեմ են քվեարկել կամ արտահայտվել: Իսկ այստեղ նույն կուսակցության խմբակցությունը բոյկոտեց», բողոքել է Ս. Նիկոյանը՝ նաեւ հավելելով, թե այդ կարեւոր նախագիծը կրկին բերվելու է խորհրդարան:

## Ժամանակի հայկական հաշվարկը

Երեկ առաջին ընթերցմամբ եւ 24 ժամվա մեջ ընդունելու առաջարկով (որպեսզի այս գարնանը կիրառմանը հասցնեն) քննարկվեց Գալուստ Սահակյանի եւ Կարինե Աճեմյանի հեղինակած «Ժամանակի հաշվարկման կարգի մասին» օրինագիծը, որն, ըստ հիմնական զեկուցող Կարինե Աճեմյանի, բնության եւ ժամանակի արհեստական փոփոխություն չկատարելու հրամայականով է պայմանավորված: Ժամանակին ամառային ժամանակի անցնելու որոշումը հիմնավորվել է էլեկտրաէներգիայի խնայողության եւ մեկ ժամ ավելի բնական լույս ունենալու ցանկության հիմնավորմամբ, որը սակայն տարիներ քննադատվել է հոգեբանների եւ մասնագետների կողմից, նշվել է, որ այդպիսի փոփոխությունները սթրեսներ են առաջացրել՝ ընդհանրապես ազդել ինքնազգացողության եւ առողջության վրա, քանի որ խախտվել են կենսառիթմերը: Եթե այս օրենքն ընդունվի, մենք այս տարի չփոխենք ժամանակը, հույս կա որ մոտ տարիներին մի փոփոխություն էլ կանենք եւ ի վերջո կհայտնվենք մեր բնական ժամային գոտու մեջ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

# Սենատորների բողոք Սահմանադրական խորհուրդ՝ ըստ թուրքաշատ շրջանների

Օրենքով ճանաչված ցեղասպանությունների գոյության վիճարկումը պատժող օրինագծի առնչությամբ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդ դիմած ֆրանսիական սենատորների ընտրատարածքների ու բնակության վայրերի աշխարհագրությունը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում:

Ինչպես տեղեկացնում է **Ժան Էքիյանը** Փարիզից, սենատորների ընտրատարածքների եւ բնակության առումով թուրքաշատ շրջանների համընկնումն է հուշում այն դրդապատճառները, որոնցից ելնելով ու հաշվի չառնելով պատմական ճշմարտությունը եւ արդարության կայացումը՝ ստորագրություն են դրել Սենատում ընդունված՝ ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրինագիծը Սահմանադրական խորհուրդ ներկայացնելու դիմումի տակ: Ասել է թե ամեն մեկը պղտոր ջրում իր բաժին ձուկն է փորձում որսալ՝ արդարության հերն էլ անիծած:




Էքիյանը հիշեցնում է, որ իրավունքի բազմաթիվ մասնագետների կարծիքով, Ֆրանսիայի Սենատում հունվարի 23-ին ընդունված հիշյալ օրինագիծը «ամբողջապես իրավական ու սահմանադրական է»: «Հայ համայնքը սպասում է խորհրդի իմաստունների վճռին, որ կարող է կայացվել մարտի սկզբներին», նշում է ֆրանսահայ լրագրողը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Որքա՞ն է իրական գործազրկությունը Հայաստանում

Հայաստանում գործազրկությունը, շատերի կարծիքով, մեր երկրի թիվ 1 խնդիրն է: Ազգային վիճակագրական ծառայության տվյալները որոշակի պատկերացում են տալիս, թե 2011-ին որքան է կազմել գործազրկությունը մեր երկրում: Ընդ որում, երկու տարբեր մեթոդաբանության կատարած հաշվարկներում գործազրկության ցուցանիշները էապես տարբերվում են միմյանցից: Առաջինը Զբաղվածության պետական ծառայության տվյալների հիման վրա ստացված ցուցանիշն է, երկրորդը՝ տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության տվյալները:

Այսպիսով, համաձայն Զբաղվածության պետական ծառայության տվյալների, 2011-ին Հայաստանում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 73,9 հազար է եղել, որը կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 6,2 տոկոսը: Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը 1 մլն 194 հազար է: Համեմատության համար նշենք, որ 2010-ին որպես գործազուրկ գրանցվել են 83,3 հազար մարդ, որը կազմել է տնտեսապես ակտիվ 1 մլն 188 հազար բնակչության 7 տոկոսը: Հստակեցնելու համար նշենք, որ այս ցուցանիշն ընդգրկում է այն մարդկանց, ովքեր դիմել են Զբաղվածության պետական ծառայության ստորաբաժանումներ եւ ստացել գործազուրկի կարգավիճակ:

Սակայն գոյություն ունի մեկ այլ մեթոդ, որը թույլ է տալիս ավելի իրական պատկերացում կազմել, թե որքան է մեր երկրում աշխատանք չունեցող մարդկանց թիվը, որոնք չեն դիմել Զբաղվածության պետական ծառայություն, դիմել են միայն աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալություններ կամ ընդհանրապես որեւէ տեղ չեն դիմել, կամ միայն իրենց աշխատանք փնտրելու մասին ասել են ծանոթ բարեկամներին: Դա տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունն է, որն ազգային վիճակագրական ծառայությունն անց կացրել է այս տարվա առաջին կիսամյակում՝ հետազոտելով 3936 տնային տնտեսությունների 15-75 տարեկան անձանց պատասխանները:

Համաձայն նախնական ցուցանիշների՝ անցյալ տարվա առաջին եւ երկրորդ կիսամյակներում գործազրկության այսպիսի պատկեր է արձանագրվել: Տնտեսապես ակտիվ բնակչությունը անցյալ տարվա առաջին եռամսյակում կազմել է 1 մլն 456 հազար մարդ, իսկ գործազուրկները՝ 301,8 հազար մարդ, երկրորդ եռամսյակում տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 1 մլն 491 հազար մարդ, իսկ գործազուրկները՝ 286,4 հազար մարդ: Ընդ որում, առաջին եռամսյակում 37,9 հազար մարդ ունեցել են երկրորդ աշխատանք, երկրորդ եռամսյակում՝ 43,9 հազար մարդ:

Գործազրկության մակարդակը, համաձայն տնային տնտեսությունների հետազոտության նախնական արդյունքների, 2011-ի առաջին եռամսյակում եղել է 20,7 տոկոս, երկրորդ եռամսյակում՝ 19,2 տոկոս՝ համեմատած տնտեսապես ակտիվ բնակչության հետ:

Այսպիսով, եթե համադրում ենք երկու ցուցանիշները, պարզ է դառնում, որ իրական գործազրկության մասին խոսելիս ավելի ճիշտ է հիմք ընդունել տնային տնտեսությունների հետազոտության ցուցանիշները, համաձայն որոնց Հայաստանում գործազրկությունը գտնվում է 280-300 հազար մարդ միջակայքում: Ակնհայտ է, որ սա բարձր ցուցանիշ է, հետեւաբար՝ աշխատատեղերի ստեղծման եւ զբաղվածության ապահովման հարցը մեր երկրում մոտ ապագայում կշարունակի մնալ ամենահրատապ լուծում պահանջող հարցերից մեկը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Օրինաց երկիր»-ը կգնա միայնակ, «Ազատ դեմոկրատներն» էլ դեռ չի կողմնորոշվել

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ **Խաչատուր Քոքոբելյանի** գնահատմամբ՝ Հայաստանի քաղաքական համակարգն այնքան զարգացած չէ, որը այսօր կբավարարի իրենց: Նրա մեկնաբանությամբ՝ նման իրավիճակի պատճառը տասնյակ կուսակցությունների առկայությունն է: «Ազատ դեմոկրատները» այլ կուսակցությունների ֆոնին առանձնանում է նրանով, որ ազատական, ժողովրդավար գաղափարների կրողն է: Նա հիշում է, որ անկախության հռչակումից ի վեր բոլոր քաղաքական ուժերը խոսել են ազատության մասին, բայց խոսքերն այդպես էլ իրականություն չեն դարձել: Չցանկանալով քննադատել ՀԱԿ-ին, առանց իրենց էլ քննադատողները շատ են, Քոքոբելյանը միայն հավելեց, որ ՀԱԿ-ը ազատական ուժ չէ: Ավելին՝ այդ մասին ՀԱԿ-ի լիդերներն էլ են հայտարարել՝ ասելով, որ իրենք սոցիալ-դեմոկրատական ուժ են: Քոքոբելյանը խոստովանեց, որ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավարությունը ՀԱԿ-ի հետ ունեցել է տարաձայնություններ: Դրանք հիմնականում կապված էին ռազմավարության, մարտավարության եւ կազմակերպչական հարցերի հետ:

«Դժբախտաբար, մենք չկարողացանք տեր կանգնել մեզ վստահած քաղաքացիների ձայներին: Մենք հաղթանակած ժողովրդին չկարողացանք հասցնել իր նպատակին: Պետք էր երկխոսել այն ժամանակ, երբ դու ավելի ուժեղ ես: Ընտրություններից անմիջապես հետո երկխոսելն ավելի ճիշտ էր, քանզի այն ժամանակ բոլորը համախմբված էին, քան դրանից տարիներ անց»:

Քոքոբելյանի փոխանցմամբ՝ Հայաստանի գլխավոր խնդիրը արտագաղթի հարցն է, որ նման է ներքին արյունահոսության: Մեկնաբանելով կուսակցության մասին շարունակ հնչող բնութագրումը, որ նրանք ամերիկյան պրոյեկտ-2 են, Քոքոբելյանն ասաց, որ վիրավորվում է նման մեկնաբանություններից: Ավելին, իրենք ազատական, ժողովրդավարական ուժ են եւ շատ ուրախ են, որ իրենց գաղափարները հասկանում եւ ընկալում են ոչ միայն Հայաստանում, այլեւ դրսում: Ինչ վերաբերում է ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչի՝ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության գրասենյակ այցելությանը, Քոքոբելյանն ասաց, որ շնորհակալ է դեսպանին այցելության համար: Իրենք պատրաստ են նաեւ այլ դեսպանատների հետ աշխատել: Այժմ դեմոկրատները նախապատրաստվում են կուսակցության համագումարին: Դեռեւս օրը հստակ չէ: Քոքբելյանի տեղեկացմամբ՝ կկայանա մարտի 2-10 ընկած ժամանակահատվածում: Հենց համագումարի ժամանակ էլ կուսակցությունը կորոշի խորհրդարանական ընտրություններին մասնակցության իր ձեւաչափը՝ միանո՞ւմ են «Ժառանգությանը», թե՞ գնում են մայիսյան ընտրություններին մենակ:

Համագումարի են նախապատրաստվում նաեւ «Օրինաց երկիր» կուսակցությունում: Համագումարը նշանակված է մարտի 3-ին: Հենց այդ օրն էլ կորոշվի կուսակցության համամասնական ցուցակը: Խմբակցության ղեկավար **Հեղինե Բիշարյանի** խոսքերով՝ ՕԵԿ-ի ցուցակում կընդգրկվեն նրանք, ովքեր ակտիվ գործունեություն են ծավալել: Ցուցակում հայտնվելու մեծ հավանականություններ ունեն նաեւ «Օրինաց»-ի շնորհալի երիտասարդները: Բիշարյանի խոսքերով՝ այսօր ՕԵԿ-ի պատգամավորների ցանկում չկան գործարարներ: Ավելին, ՕԵԿ-ը այս անգամ էլ փորձելու է զերծ մնալ գործարար պատգամավորներին ցուցակում ընդգրկելուց: Մայիսյան ընտրություններին դաշինքով գնալու հարցը ՕԵԿ-ի համար փակված է: Վստահ են, որ նոր խորհրդարանում կրկնապատկելու են իրենց տեղերը:

Հ. Հ.

# Ո՞վ պետք է լինի ընդդիմադիր

## *Բանավեճի փոխարեն*

Կասկած չկա, որ ներկա քաղաքական դաշտը Հայաստանում ծավալվում է իշխանություն-ընդդիմադիր փոխհարաբերության շրջանակում, որին ԶԼՄ-ներում օրական տասնյակ հոդվածներ ու հարցազրույցներ են նվիրվում: Սակայն այդ հսկայական նյութից ինձ համար պարզ չի դառնում, թե իրականում ո՞վ պետք է լինի իսկական ընդդիմադիր՝ գործող իշխանություններին:

Ես դասական քաղաքականություն չեմ ուսումնասիրել (ավարտել եմ Երեւանի պոլիտեխնիկական եւ բժշկական ինստիտուտները), այնուամենայնիվ ես չեմ ընդունում, որ ներկա ընդդիմադիր դաշտը զբաղեցնում են նրանք, ովքեր ժամանակ առ ժամանակ զբաղեցրել են պետական տարբեր պաշտոններ: Նույնպես ժողովրդի հիմնական մասն էլ, այն է՝ մոտ 80 տոկոսը, պետք է իր համար հստակ պարզի՝ ո՞վ է իսկական ընդդիմադիրը: Պարզ է, որ յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն ունի իր ծրագիրը, գործելակերպը, եւ եթե իրականացվի այդ ծրագիրը, ի՞նչ կտա ժողովրդին (եւ ոչ թե մի բուռ մարդկանց): Իմ կարծիքով՝ ներկա ընդդիմադիր դաշտի մի շարք պահանջներ, ինչպիսիք են՝ ազատություն որոշ խումբ մարդկանց, խոսքի, մամուլի ազատություն, աղանդների ազատություն, մաքուր էկոլոգիա եւ այլն, ծրագրային չեն կարող լինել, քանի որ այսպիսի հարցերը պետք է լուծեն համապատասխան օրգանները: Այլ բան է համազգային խնդիրների բարձրացումը, ինչպիսիք են՝ հավասարություն հասարակության բոլոր անդամների համար (իհարկե, նախարարն ու որմնադիրը չեն կարող միատեսակ ապրել), աշխատանք բոլորի համար՝ որպես պետության հզորացման միակ միջոց, անվճար կրթություն, անվճար բժշկություն (այսօր բժշկությունն ուտում է մարդկանց): Վարորդի, որմնադիրի երեխան էլ է սովորում, բուժվում, բայց դրանք նրանց վրա շատ թանկ են նստում՝ մեկընդմիշտ կախված մնալով բանկերից, կամ զրկվելով ողջ ունեցվածքից: Ներկա ընդդիմադիրներից շատերը ապահով են ամեն ինչով, եւ դժվար թե նրանք շատ են անհանգստանում մի քանի տասնյակ հազարավոր ընչազուրկների համար: Նրանց հիմնական նպատակն է գալ իշխանության, «ղեկավարել իմ ժողովրդին» եւ, որ ամենակարեւորն է, կարողություն կուտակել: Զուտ այս նպատակի համար չարժե կատարել իշխանափոխություն, լավ թե վատ՝ ղեկավարվում ենք: Դժվար թե երկիրը ավելի ծաղկեցնեն, հացի տեր դառնա ավելի քան 70 տոկոսը, իսկ «ծախված ջերմուկը» հզորացնի երկիրը, ավելանա բնակչությունը, բանվոր դասակարգ առաջանա, բանվորի արձան դրվի եւ երկրի բյուջեն լցվի հենց աշխատավոր հարյուրհազարավոր բանվոր մարդկանց ստեղծած արժեքով:

Հակառակ դեպքում այդ չաշխատող հարյուր հազարը նորմալ կենսաթոշակ չի ստանա, այ սրա մասին պետք է բարձրաձայնի իսկական ընդդիմադիրը: Այնուամենայնիվ, ո՞վ պետք է իրեն հռչակի ընդդիմադիր: Իմ համոզմամբ՝ դա պետք է լինի այն կուսակցությունը (կամ անհատը), ում դրոշի վրա գրված է «հավասարություն», «ո՛չ աղքատությանը», «մշտական աշխատանք» (ոչ 10-12 ժամ), պետական հոգածություն կրթության եւ բժշկության նկատմամբ:

Լուսահոգի Ս. Կապուտիկյանը մի առիթով ասել է մոտավորապես այսպես. «Ես չեմ ուրախանում, երբ մեկը հարստանում է, բայց տխրում եմ, երբ մեկը աղքատանում է»: Այսպես պետք է մտածի յուրաքանչյուր ընդդիմադիր: Հետեւաբար ինձ համար ընդունելի է, որ ընդդիմադիր դաշտը զբաղեցվի բացարձակապես սոցիալական ուղղվածության կուսակցություններով՝ սոցիալիստական, կոմունիստական, մարքսիստական եւ նման այլ կազմակերպություններ: Միայն դրանք կարող են պահանջել ազգային եկամտի շատ թե քիչ հավասար բաշխումը, որը եւ կվերացնի հասարակական լարվածությունը: Ճիշտ է, այսօր էլ մի մասի համար աշխատանք կա (ես նկատի չունեմ պետական համակարգը), բայց նրանք աշխատում են 10-12 ժամ: Մնացյալը, ովքեր դարձյալ հռչակվում են ժողովրդի համար պայքարողներ, իմ կարծիքով, կան հանուն «անունի եւ ոչ ամանի»:

**ՌԱՖԻԿ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ**
Երեւան



# Հայաստանում տիրող կաշառակերության ու մարդու իրավունքներին նվիրված քննարկում ԱՄՆ-ում

Անցած շաբաթ Նյու Յորքից ու Նյու Ջերսիից մոտ 300 ամերիկահայեր էին հավաքվել Ֆեր Լոունի (Նյու Ջերսի) Սբ Լեւոն եկեղեցում՝ մասնակցելու Հայաստանում կաշառակերության եւ մարդու իրավունքների վիճակի հետ կապված առաջին լուրջ քննարկմանը:

Համաժողովը, որ կրում էր «Ճշմարտությունը կամ հետեւանքները. Հայաստանում մարդու իրավունքների մարտահրավերները եւ օրենքի գերակայությունը» խորագիրը, համակարգում էր **Արդա Հարությունյանը**, ռազմավարական հաղորդակցության եւ ճգնաժամային կառա-




վարման փորձագետ Նյու Յորքից: Իր բացման խոսքում Արդան անդրադարձավ Հայաստանում առկա խնդիրներին՝ կապված մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հետ, սակայն ընդգծեց, որ շատ ավելի դյուրին է հարթել պրոբլեմը, քան ճգնաժամը, որ Սփյուռքը կարող է եւ պետք է իրազեկված ու ներգրավված լինի:

Առաջինը ամբիոնին մոտեցավ հրավիրված բանախոս, դոկտոր Սիմոն Փայասլյանը՝ Բոստոնի համալսարանի արդի հայոց պատմության եւ գրականության Կ. Զարլզ եւ Էլիզաբեթ Մ. Քենոսյանի ամբիոնի վարիչը:

Պրն Փայասլյանի ելույթը հիմնականում անդրադառնում էր այն հարցին, թե արդի պատմության մեջ հայ ժողովուրդը շատ քիչ փորձառություն ունի՝ կապված մարդու իրավունքներին եւ օրենքի գերակայությանը վերաբերող հայեցակարգի հետ: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ նա իր պատմության ընթացքում եղել է այլ ուժերի երկարատեւ հպատակության տակ:

Պրոֆեսորը նաեւ նկարագրեց, թե Հայաստանի դասական համակարգի համընդհանուր կոռուպցիան ինչպես է աղավաղում սեփական երկրի Սահմանադրությունը:

Պրն Փայազլյանի խմբային քննարկմանը միացան տարբեր փորձառություն եւ տեսակետ ունեցող անձինք: Նրանք էին՝ Կարեն Հակոբյանը, երաժիշտ, հետազոտող, մարդու իրավունքների իրավապաշտպան, Արամ Համբարյանը՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի (ANCA) գործադիր տնօրենը Վաշինգտոնում:

Նյու Յորքից գործարար, փաստաբան եւ մարդու իրավունքների իրավապաշտպան, ներկայումս Հայաստանի քաղաքական ֆորումի ավագ գիտաշխատող Կարո Եղնուկյանը հորդորեց Հայաստանի իշխանություններին, որ հակակոռուպցիոն դիրքորոշում գրավեն կեղծ արտահայտությունների փոխարեն եւ ակտիվորեն արձագանքեն օրինախախտներին: Կարոն նաեւ առաջարկեց, որ 20,000 սփյուռքահայ գործարարներ «ներխուժեն» Հայաստան իրենց բիզնես պլաններով եւ ներդրումներով: Սա կարող է ստեղծել տնտեսական մի ուժ, որի հետ պետք է հաշվի նստեն եւ որը դուրս կմղի կոռումպացված օլիգարխներին:

Կարեն Հակոբյանն իր ելույթը սկսեց՝ անդրադառնալով երկրի բնակչության արտագաղթին, որը հիմնականում պայմանավորված է անարդարությամբ եւ կոռուպցիայով, որոնք բացառում են մարդուն անհրաժեշտ հնարավորությունները:

Արամ Համբարյանը երեկոյի ընթացքում հաստատեց, որ մարդու իրավունքների համար պայքարը չպետք է գերազանցի Ցեղասպանության ճանաչման համար մղած պայքարին, քանի որ երկուսն էլ հավասարազոր են:

Տես էջ 4

# Մեր ահազանգը տեղ հասավ



«**Ազգ**»-ի նախորդ համարում մեկում նշել էինք, որ ձնամաքրման աշխատանքները լավ չեն կատարվում եւ քաղաքի մայթերը սահադաշտ են հիշեցնում: Այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ համարի լույս տեսնելու հաջորդ օրն արդեն դրական տեղաշարժ էր նկատվում մայրաքաղաքում եւ քաղաքապետարանի աշխատակիցները սկսել էին մաքրել նաեւ մայթերը: Հուսով ենք, որ աշխատանքները կկատարվեն ոչ միայն Հանրապետության հրապարակում, այլ նաեւ մնացած առաջնային ու երկրորդական փողոցների մայթերում:

Ա. Շ.

## Հարցազրույց

# «Հայ թուրքական լարվածությունը չի կարող բարձր չափերի հասնել»

### Համոզված է ՀՀ դեսպանը Բելգիայում

***20-ամյա անկախ Հայաստանի դիվանագիտական էջերում կարող ենք արձանագրել, որ Բելգիայի Թագավորությունում Հայաստանը ներկայացնող դեսպանների փոփոխություններ գրեթե չեն եղել: Սկիզբը դրվեց միայն 2009 թ.-ին, երբ ՀՀ դեսպան Վիգեն Չիթեչյանի երկարատեւ լիազորությունները վերապահվեցին Ավետ Ադոնցին:***

***Բելգիայի Թագավորությունը Հայաստանի համար առանձնահատուկ եւ նշանակալից զարկերակ է: Այստեղ են տեղակայված Եվրոմիության, Եվրոխորհրդի, ինչպես նաեւ որոշիչ դեր խաղացող այլ եվրատյաններ, որտեղ վճռվում եւ հատվում են եվրոերկրների ներքին եւ արտաքին խնդիրներն ու ճակատագրերը:***

***«Ազգ»-ը ՀՀ դեսպան Ավետ Ադոնցին հանդիպեց Բրյուսելում: Ամփոփելով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության վերջին երկամյա գործընթացը՝ պարոն Ադոնցը պատասխանեց մեզ հետաքրքրող հարցերին:***

**- Պրն Ադոնց, Բելգիայում ՀՀ դեսպանության աշխատանքներին զուգընթաց կարելի՞ է ասել, որ շատ ավելի ծավալուն են Եվրոմիությանն առնչվող ծրագրերը: Ներկայումս ի՞նչ գործընթաց է տարվում ԵՄ-ի հետ, որը կարող ենք համարել նկատելի ձեռքբերում Հայաստանի համար:**

- Ես ժամանել եմ 2009-ին, եւ անմիջապես ԵՄ-ի հետ մեկնարկվեց ասոցացման համաձայնագրի գործընթացը: Ներկայումս տեղի են ունեցել բանակցությունների 8-9 փուլեր, 27 կետերից 20-ից ավելին արդեն համաձայնեցվել են: Հայաստանի համար Եվրոմիության գործընթացն առաջնային է: Մինչ վերջնական փուլին հասնելը նախ պահանջվում են արտաքին եւ ներքին բարեփոխումներ՝ սկսած տնտեսական, վերջացրած գիտական եւ կրթական ոլորտներում: Եվրոինտեգրման գործընթացը ոչ միայն Հայաստանի, այլեւ Եվրոպայի ցանկությունն է, ինչը պահանջում է նախ խոսել այսպես ասած ընդհանուր լեզվով, այն ներառում է ընդհանուր օրենսդրության իրականացում, որն անհնար է առանց տնտեսական ինտեգրման:

**- ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիրն ի՞նչ փուլում է եւ որքանո՞վ է իրականալի:**

- Հուսով եմ, մոտակա երկու ամիսների ընթացքում բանակցությունները կսկսվեն: Թերեւս նախապատրաստական աշխատանքներն արդեն արված են: Իրականացվել են լուրջ բարեփոխումներ: Երկու տարի առաջ Հայաստան ժամանեց Եվրոհանձնաժողովի պատվիրակությունը: Տասնօրյա այցի ընթացքում ուսումնասիրվեց իրավիճակը, նշվեցին 4 ուղղություններ, ուր հստակ աշխատանքներ պետք է տարվեին, որից հետո միայն հնարավոր կլիներ սկսել ազատ առեւտրի գործընթացն իրականացնող բանակցությունները: Այսինքն՝ բանակցություններ սկսելն արդեն իսկ պայմանավորված էր լայնածավալ աշխատանքներով, որոնք ներառում են մաքսային վարչարարական բարեփոխումներից մինչեւ ազատ առեւտրի բանակցությունների կառավարման փուլ: Կարող ենք փաստել, որ նախափուլային աշխատանքների 50 տոկոսն իրականացված է, ինչը բուն գործընթացի մեկնարկման հիմքն է: Եթե, իհարկե, չլինեն երկկողմ ակտիվ շփումներ, այցելություններ տարածաշրջան, ապա նախատեսված որոշումները չեն կարող ընթացք ստանալ: Այսօր մեր քաղաքացիների համար եվրոպական երկրներ այցելելն այնուամենայնիվ հեշտ չէ:

**- Եթե չեմ սխալվում, քննարկումների փաթեթում նախատեսված է նաեւ վիզաների ազատականացման ծրագիր:**

- Վիզաների ազատականացման մասին դեռ չենք խոսում, միայն մտածում ենք: Առայժմ բանակցությունները տարվում են վիզաների դյուրացման ուղղությամբ: Իսկ ազատականացումը կլինի հաջորդ փուլում: Նախորդ տարվա դեկտեմբերին ավարտվեցին պաշտոնական ձեւակերպումները: ԵՄ-ի եւ ՀՀ կառավարության միջեւ այս ուղղությամբ բանակցությունները կսկսվեն փետրվարին: ԵՄ-ը տարածաշրջանում փորձ ունի, քանի որ Վրաստանի հետ այս գործընթացն արդեն ավարտվել է: Մենք կարող ենք գործընթացն ավելի արագացնել, բայց ԵՄ-ի եւ Եվրոխորհրդարանի կողմից մինչեւ վավերացման ձեւակերպումը պահանջվում է որոշակի ժամանակահատված:

**- Ինչո՞ւ, որեւէ երկմտություն, մտավախություն կա՞:**

- Ոչ, մտավախություն չկա, քանի որ այն պահանջները, որոնք նախատեսված էին այլ երկրների հետ, մենք արդեն իրականացրել ենք: Հայաստանը մի քանի քայլ առաջ է օրակարգից: Մտավախությունս բյուրոկրատական խնդիրներն են, քանի որ որոշումներն ու համաձայնությունները մինչեւ կայացվում ու վավերացվում են վերին ատյանների կողմից՝ բավականին ժամանակ է պահանջում: Ամռանը Եվրոխորհրդարանը հանգստանում է, դա նշանակում է՝ եթե վավերացման գործընթացը սկսվի սեպտեմբերին եւ անցնի համապատասխան հանձնաժողովներով, լավագույն դեպքում տարեվերջին միայն կարող ենք ավարտին հասցնել: Վերջին երկու տարում քաղաքական, տնտեսական, մշակութային ինչպես նաեւ վիզաների դյուրացման ուղղությամբ լայնածավալ առաջընթաց է եղել: Այդ մասին են վկայում նաեւ Եվրոմիության հանձնաժողովների զեկույցները:

**- Պրն Ադոնց, իսկ ինչպե՞ս կդիտարկեիք հայ-բելգիական հարաբերությունները:**



- Բելգիայի հետ Հայաստանը համարվում է ավանդական բարեկամ երկիր: Հավանաբար շնորհիվ հայ համայնքի: Այստեղ հայերը ճանաչվել են 20-րդ դարի սկզբին, իսկ ավելի ուշ՝ 40-50 ականներին եւ հատկապես հայկական եկեղեցու կառուցումից հետո, հայերը մեծ ճանաչում ձեռքբերեցին, եւ մեր օրակարգում նախատեսված են Հայաստան-Բելգիա քաղաքական եւ տնտեսական ծրագրեր: Հստակ կարող ենք ասել, որ Եվրոմիության երկրներից Բելգիան Հայաստանի համար համարվում է առեւտրատնտեսական թիվ 1 գործընկերը:

**- Բայց եւ այնպես, հստակ կարող ենք փաստել, որ առեւտրատնտեսական գործունեությունը խիստ սահմանափակ է:**

- Այո, այն ձեւավորված է ընդամենը մեկ ապրանքատեսակով: Բելգիայի Անտվերպեն քաղաքից, որը հայտնի է որպես ադամանդի առեւտրի կենտրոն, հումքը ուղարկվում է Հայաստան: Ներկայումս Հայաստանում կան գործող չորս արտադրամասեր բելգիական կապիտալի մասնակցությամբ: Մեր նպատակն է հնարավորինս աջակցել եւ գործընթացն առավել ընդլայնել: Անշուշտ, չենք ուզում սահմանափակվել միայն ադամանդի առեւտրով: Նախորդ ամռանը մոտ 50 գործարարների այց կազմակերպվեց Հայաստան: Այսօր արդեն արդյունքներն ակնհայտ են, 3-4 ուղղություններ կան, որ մոտակա ամիսներին կգործեն: Դրանք առնչվում են արդյունաբերության, դեղագործության եւ առողջապահության ոլորտներին: Տնտեսական հարաբերությունների աշխուժացումը հանգեցնում է նոր ինտենսիվ փոխայցելությունների: Երբեք չենք փորձում սպասողական դերում լինել՝ մեր կողմից եւս նախաձեռնում ենք գործարար խմբերի այցեր Հայաստան եւ Ղարաբաղ: Հիմքում՝ Հայաստանն առավել ճանաչելի դարձնել Եվրոբիզնեսի շրջանակներում:

**- 2007-ին հայ-թուրքական քաղաքական մեծ բախումներ եղան Բելգիայում: Այսօր էլ վերստին վտանգն առկա է: Ինչպիսի՞ն է դեսպանատան արձագանքը:**

- Լարվածություն միշտ եղել է: Հատկապես ցեղասպանության ճանաչման շուրջ տեղի ունեցող բանակցություններն առավել բարձրացնում են լարվածության մակարդակը: Թուրքիան չի ընդունում, որ սահմանները չեն բացվի եւ դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվի իր պատճառով: Հետեւաբար փորձում են հակահայկական ֆոն ստեղծել: Վերջիվերջո վստահ եմ, որ լարվածությունը պետք է վերանա, քանի որ հակասում է եվրոօրենքներին: Չի կարող այստեղ՝ Բելգիայում լարվածությունը բարձր չափերի հասնել :

**- Վերջին մեկ տարում բավականին հայեր են արտաքսվել Բելգիայից: Ըստ շատերի որակման՝ կատարվում է «հայաորսություն», որում մեղադրում են Հայաստանի իշխանություններին:**

- Սկզբունքորեն համամիտ չեմ «հայաորսություն» ձեւակերպմանը: ՀՀ կառավարությունը որեւէ կապ, որեւէ դեր եւ մասնակցություն չունի բելգիական կառավարության միգրացիոն ռեժիմի խստացման հետ:

Եվրոպական երկրներից Բելգիան միակն էր, որ դեռ պահպանել էր միգրացիոն լիբերալ ռեժիմը, բայց արդեն մեկ տարի ռեժիմի խստացման ուղղությամբ որոշում է կայացվել: Բելգիայից արտաքսելը չի վերաբերում միայն հայերին, այլ բոլոր ոչ եվրոպական միության անդամ երկրների քաղաքացիներին, ովքեր գտնվում են անօրինական կարգավիճակում:

Պաշտոնապես կարող եմ հայտարարել, որ ՀՀ դեսպանության կամ հայաստանյան որեւէ պաշտոնյա այդ խնդիրը երբեւէ չի քննարկել: Օրակարգից իսպառ բացակայում է հայերին արտաքսելու հարցը: Այլ բան է, երբ բելգիական իշխանությունները որոշում են կայացնում չընդունել մեր քաղաքացիներին, մերժում են Բելգիայում ապրելու իրավունքից, ապա խնդրում են Հայաստանի իշխանություններին, որ հետ ընդունեն իրենց քաղաքացիներին:

**- Վիզաների դյուրացման դեպքում, դեպի Եվրոպա արտագաղթի մտավախություն չկա՞:**

- Միգրացիոն ռեժիմի բանակցությունները ենթադրում են երկու հարթություն՝ վիզաների դյուրացում եւ ռեադմիսիա: Եթե որեւէ երկրի քաղաքացի ժամանում է Բելգիա եւ փորձում անօրինական ճանապարհով մնալ, եւ եթե բելգիական իշխանությունները մերժում եւ հետ ուղարկելու որոշում են կայացնում, ապա տվյալ երկիրը պարտավորվում է հետ ընդունել իր քաղաքացիներին: Իսկ ռեադմիսիան այն փաստաթուղթն է, որը կարգավորում է միգրացիոն գործընթացը եւ նվազեցնում անօրինական միգրացիան:

Որքան հեշտացվի ելք ու մուտքի գործընթացը, այնքան մեր քաղաքացիները չեն փորձի ամեն գնով կացության կարգավիճակ փնտրել օտար երկրներում :

**- Որքան շատ լինեն հայկական միությունները, այնքան մեր ձայնն առավել ազդեցիկ կլինի միջազգային ատյաններում, այս համոզմունքն են հայտնել որոշ քաղաքական եւ հասարակական գործիչներ: Ո՞րն է ձեր տեսակետը:**

- Ես համամիտ չեմ, ավելի հակված եմ փոքր Բելգիայում ունենալ քիչ քանակի, բայց որակյալ կազմակերպություններ:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ
Բրյուսել

---

*ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է ՍՓՅՈՒՌՔԸ*

## Հայաստանում տիրող...

*3-րդ էջից*

**Վարդան Աբդոն՝ Նյու Ջերսիի Հայկական ռադիոժամի տնօրենն իր խոսքում ասաց. «Ճշմարտությունը եւ հետեւանքները» հանդիպման կազմակերպման պատճառը եղավ Նարեկ Հարությունյանի անօրինական ձերբակալության մասին ստացած լուրը: Ամբողջ Սփյուռքի արձագանքը Նարեկի դեպքին՝ Հայաստանում կատարվող երեւույթների շուրջ Սփյուռքի մտահոգության հստակ չափորոշիչ է հանդիսանում:**

**Սփյուռաքահայերը հստակ հայտարարություն ուղարկեցին օլիգարխներին, իշխանություններին ու մնացածներին, որ տեղի ունեցողը պարզապես չափից դուրս շատ է այն ընդունելու համար:**

**Բանավեճն ավարտվեց Նարեկի եղբոր՝ Սարո Հարությունյանի ուղերձով, որը նույնպես պետական մարմինների կողմից հետապնդումների թիրախ է դարձել: Նա զեկուցեց, որ Հարությունյանների ընտանիքի ընկերության աշխատակիցներից շատերին սպառնացել են եւ ստիպել ստորագրել ընտանիքի բիզնես գործունեության եւ հարկային պարտավորությունների հետ կապված կեղծ հաշվետվություններ: Սարոն նշեց, որ Հարությունյանների ընտանիքի անմեղության ապացույցները ծանրակշիռ կլինեն ԱՄՆ-ի, Հայաստանի եւ այլ միջազգային յուրաքանչյուր դատարանում: Չնայած այս ամենին՝ նա հոռետեսորեն արտահայտվեց հայկական դատարանում արդարություն գտնելու հեռանկարների մասին:**

**Երեկոն ամփոփելով՝ Արդան նշեց, որ ժողովրդավարությունը մշտապես զարգացող պրոցես է նույնիսկ Հայաստանում: Սփյուռքը պարտավոր է օգնել Հայաստանին՝ այդ զարգացումն իրականացնելու:**

**Անցած կիրակի Արդան հարցազրույց տվեց Նյու Ջերսիի Հայկական ռադիոժամին: Նա նշեց, որ ինքը չի կարծում, թե իրենցից ինչ-որ մեկը հիշում է, որ մոտ 300 մարդ ներկայանա ուրբաթ երեկոյան նման լուրջ քննարկմանը մասնակցելու:**

**«Մարդիկ Սփյուռքում ուզում են ներգրավված լինել եւ օգնել լուծելու Հայաստանի խնդիրները», ընդգծեց նա:**

**Արդան նաեւ հիշեցրեց ունկնդիրներին, որ հանդիպել է Նարեկի ընկերներին, ովքեր ասել են, որ ժամանակն է ինչ-որ բան անել. «Իրականում Նարեկի գործն սկսեց սա: Նարեկն ունի ամեն պատճառ վիրավորված լինելու, սակայն նա միայն ասաց. «Դուք պետք է վերաբերվեք Հայաստանին ինչպես հիվանդ երեխայի, որին խնամում են, որ առողջանա: Մենք երես չենք թեքում մարդկանցից, ում մենք սիրում ենք, բայց որոնք հիվանդ են»: Եկեք հիշենք, որ Նարեկի հարցը դեռեւս լուծված չէ: Ինչ որ այսօր տեղի ունեցավ, միայն սկիզբն է, եւ սա նշանակում է, որ մենք շարունակելու ենք մեր քննարկումները թեմայի շուրջ», ասաց Ա. Հարությունյանը:**

**Նշենք, որ հանդիպումը համահովանավորվել էր տարբեր կազմակերպությունների կողմից՝ ազդանշան տալով համայնքին, որ նման քննարկումն անհապաղ է եւ անհրաժեշտ: Կազմակերպիչների ցուցակում են հետեւյալ կազմակերպությունները. «Հայկական Բառ ասոցիացիան», «Հայ ինժեներների եւ Գիտնականների ասոցիացիան», «Մարդու իրավունքների փաստաբանների հայկական ասոցիացիան», Վարդանանց ասպետներ համախմբումը, Նյու Յորքի հայ ուսանողների ասոցիացիան, Ռուտգերի հայկական ակումբը, Հայաստանի քաղաքական ֆորումը, Թեքեյան մշակութային միությունը եւ Թուֆենկիան հիմնադրամը:**

ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

# Իսկ ձեր ի՞նչ գործն է, ադրբեջանցիներ

Անցյալ շաբաթվա վերջին իսրայելական Izrus.co.il կայքէջի տեղեկացմամբ՝ Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանը առաջին անգամ արտահայտվել է այդ երկրում Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման հարցի մասին: Լիբերմանը կարծիք է հայտնել, որ «Օսմանյան կայսրությունում 1915-ին տեղի ունեցած իրադարձությունները չպետք է անվանել ցեղասպանություն»: Այս մասին, բնականաբար, մեծ ոգեւորությամբ տեղեկացնում են նաեւ ադրբեջանական լրատվամիջոցները, այստեղ հասկապես նկատենք Լիբերմանի հաճախ այցելությունները Բաքու, որոնցից մեկի ընթացքում, երբ նա հանդիպել էր Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովին, արտահայտեց այսպիսի միտք. «Սա երկու ԱԳ նախարարների հանդիպում չէր, սա երկու բարեկամների հանդիպում էր»: Հասկանալի է, որ Լիբերմանը դեմ է «1915-ի իրադարձությունները ցեղասպանություն որակելուն» ոչ թե այն պատճառով, որ դա ցեղասպանություն չէ, կամ իր համոզմամբ ցեղասպանություն չէ, կամ գոնե՝ «դրանով կարող են վտանգվել Թուրքիայի հետ հարաբերությունները», այլ որովհետեւ՝ «Պետք չէ հարվածի տակ դնել Ադրբեջանի հետ ռազմավարական համագործակցությունը»: Այլ կերպ՝ Լիբերմանը ցեղասպանության փաստը չի հերքում ամենեւին, ինչպես չեն հերքում ցեղասպանության եղելությունը նրա կուսակիցներ, ԱԳ փոխնախարար Դանի Այալոն եւ Քնեսեթում «Մեր տունն Իսրայելն է» խմբակցության ղեկավար Ռոբերտ Իլատովը: «Մենք կարծում ենք,որ Հայոց ցեղասպանության հարցը չպետք է քննարկվի Իսրայելի խորհրդարանում, քանի որ վստահ ենք, որ դա պատմական հարց է, որով պետք է զբաղվեն պատմաբանները», իր կարծիքը «ադրբեջանցի հրեաների» պատկանող Vesti.az-ին հայտնել է Ռոբերտ Իլատովը: Նա նաեւ ընդգծել է. «Քնեսեթում կան մեծ թվով պատգամավորներ, որոնք հարցի ընդունման կողմնակիցներն են, սակայն ես հույս ունեմ, որ մեզ կհաջողվի համոզել նրանց, որ Քնեսեթը միջազգային կառույց չէ, որը կարող է քննել Հայոց ցեղասպանության հարցը»:

Ուշագրավ է Իսրայելում ադրբեջանական համայնքի ներկայացուցիչ Յուրի Բոչարովի տեսակետը. «Այո, Ավիգդոր Լիբերմանի հայտարարությունը բոլորիս հայտնի է, սակայն ռազմի դաշտում միայնակ չեն պատերազմում: Ստացվում է, որ Իսրայելում ադրբեջանական համայնքը միայնակ է պայքարում այս երկրում այսպես կոչված Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, դրա համար չստանալով ոչ մի օժանդակություն Ադրբեջանից կամ Թուրքիայից: Ընդ որում, այն ժամանակ, երբ մենք այստեղ պայքարում ենք հայերի ցեղասպանության ճանաչման դեմ, Թուրքիայում 25-հազարանոց ցույցեր են տեղի ունենում հակառակ պահանջով: Փաստն այն է, որ ադրբեջանական համայնքը Իսրայելում այսօր մենակ է այս պայքարում, մինչդեռ սա միայն մեր հարցը չէ, սա բոլոր երկրների ադրբեջանական համայնքների հարցն է», ասել է Բոչարովը:

Այդուհանդերձ մնում են որոշ «ճշտող հարցեր», օրինակ. ցեղասպանության համար այսօր ոչ մի երկիր չի մեղադրվում պաշտոնապես, հետեւաբար ո՞վ եւ ինչի՞ց է վախենում: Ցեղասպանությունը ժխտելու համար միայն մեղադրվում է այսօրվա Թուրքիան, որը Օսմանյան կայսրության իրավահաջորդն է, հետեւաբար՝ եթե այսօրվա Թուրքիայում, ինչպես ադրբեջանցի հասարակական գործիչն է նկատում, «25-հազարանոց ցույցեր են տեղի ունենում» ցեղասպանության ճանաչման պահանջով, ուրեմն ի՞նչ գործ ունի այստեղ «այլ պետություն» Ադրբեջանը:

Հաջորդը, ցեղասպանություն դատապարտած որեւէ խորհրդարան «միջազգային կառույց» չէ, ու այս որոշմանը նրանք գալիս են զուտ հավատարմություն տալու իրենց իսկ երկրներում ժողովրդավարությանը, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը եւ մարդկության դեմ հանցագործության դրսեւորումները հետագայում կանխելու շարժառիթներով, ինչն անելու համար ամենեւին էլ պարտադիր չէ «միջազգային կառույց լինելը»: Եվ ամենանուշագրավը. Ավիգդոր Լիբերմանը՝ ի պաշտոնե պետք է, որ լինի փորձված ու հմուտ դիվանագետ, ուրեմն դժվար է հավատալ, որ նա կարող է «խառնել» մի երկրի հետ հարցերը բոլորովին այլ երկրի հետ: Հետեւաբար Ադրբեջան պետություն՝ որպես այդպիսին, գոյություն չունի, համենայն դեպս՝ Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանի «խոսքերով»:

Իսկ առայժմ հիշեցնենք, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման քննարկումներ Քնեսեթում ընթանում են, դեռեւս կրթության հանձնաժողովում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Մուկը փիղ ծնեց...

**Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը շատ հարցերում է նախընտրում ջայլամի կեցվածքը, երբ ամենաստորին օղակներից անգամ ինչ-որ մեկնաբանություններ, հայտարարություններ կամ դրանց նմանակելու փորձեր արվում են, մինչդեռ Ալիեւ կրտսերը չի խոսում: «Եթե ոչինչ չանես, երբեք սխալ չես գործի» տարբերակով առաջնորդվող հարեւան երկրի նախագահը բազմաթիվ անգամներ ապացուցել է, որ իր փոխարեն հայտարարությունները թողնում է ուրիշներին, անգամ այնպիսի դեպքերում, երբ հենց իր անունից հայտարարություն անելու պահանջ կա ինչպես դիվանագիտական, արարողակարգային, այնպես էլ հասարակական առումներով:**

**Ֆրանսիայի խորհրդարանում օրենքով ճանաչված ցեղասպանությունների գոյության վիճարկումը պատժող օրինագծի ի հայտ գալու, ապա նաեւ քննարկումների փուլում, ինչպես նաեւ Ազգային ժողովում ու Սենատում ընդունումից հետո Թուրքիայում ինչքան էլ պահանջեցին՝ Ալիեւ կրտսերը ծպտուն իսկ չհանեց:**

**Սակայն երեկ, ըստ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի պաշտոնական հաղորդագրության, «մուկը փիղ է ծնել», ասել է թե Ալիեւը վերջապես անդրադարձել է, թուրքական կողմի մեղադրանքներին ի հակադրություն, Սենատի օրինագծին, սակայն նախագահական հաղորդագրությունը ոչ մի բառ ուղղակի խոսքով մեջ չի բերում:**

**Այդուհանդերձ, տեղեկանում ենք, որ երեկ ֆրանս-ադրբեջանական աշխատանքային, նաեւ «Ֆրանսիա-Կովկաս» խմբի անդամ, թուրքամետությամբ հայտնի ֆրանսիացի Նատալի Գյուլեի գլխավորությամբ փոքր պատվիրակության հետ հանդիպմանը Ալիեւ կրտսերը «շնորհակալություն է հայտնել արդարացի դիրքորոշում ունենալու համար»՝ նկատի ունենալով այդ նույն պատգամավորների կողմից օրինագծի առնչությամբ սահմանադրական բողոք ներկայացնելու հանգամանքը:**

**Ակնհայտորեն միայն սովորական «շնորհակալությամբ» գործն այստեղ գլուխ չի եկել, այդուհանդերձ, Ալիեւն ավելի առաջ է գնացել ու «հույս է հայտնել, թե օրենքը ուժի մեջ չի մտնի»:**

**Ինչպես ասում են, Ալիեւը հուսահատ փորձեր է արել քիչ սիրաշահելու Թուրքիային, թեեւ ասածն էլ մի բան չէ, բայց դե Ադրբեջանի նախագահի պարագայում սա շատ «մեծ, հսկայական» քայլ է:**

**Հուսանք, որ հերթական անգամ Ալիեւ կրտսերի հույսերն իրականության հետ աղերսներ չեն ունենա:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Աբբասը կդառնա ազգային համաձայնության կառավարության ղեկավար

Պաղեստինյան ինքնավարության ազգային համաձայնության կառավարության ղեկավարի պաշտոնը կզբաղեցնի Պաղեստինի ներկայիս ղեկավար Մահմուդ Աբբասը: Պաղեստինյան «Ֆաթհ» եւ «Համաս» երկու գլխավոր խմբակցությունները այդ որոշումն են ընդունել Քաթարում Աբբասի եւ «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշաալի նախագահությամբ անցկացված բանակցություններում:

Աբբասի թեկնածությունն առաջարկել էր Մաշաալը, թեեւ, ըստ արաբական լրատվամիջոցների, առաջարկությունն առանձնապես չէր ոգեւորել Աբբասին:

«Ալ Արաբիա» հեռուստաալիքի տվյալներով, Աբբասը կառավարությունը կգլխավորի մինչեւ առաջիկա խորհրդարանական ընտրությունների անցկացումը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հավելում է, որ առայժմ հայտնի չէ, թե «Համասի» իսլամիստներին ինչպես են արձագանքել իրենց առաջնորդի առաջարկությանը:

Անցյալ տարվա գարնանը «Ֆաթհը» եւ «Համասը» ստորագրել էին համաձայնագիր ազգային հաշտեցման եւ իշխանության ընդհանուր մարմինների ստեղծման վերաբերյալ: Փաստաթուղթը հնարավոր էր դարձրել վաղեմի հակառակորդների համագործակցությունը: Ավելի ուշ պայմանավորվածությունն ամրագրվել էր «Ֆաթհի», «Համասի» եւ պաղեստինյան 13 ուրիշ խմբավորումների պատվիրակների ներկայությամբ:

Համաձայնագրի կարեւորագույն կետերից են ժամանակավոր անցումային կառավարության ձեւավորումը եւ համընդհանուր ընտրությունների ժամկետի որոշումը: Փետրվարի 6-ին Քաթարում բանակցությունները շարունակվել են:

ՄԱԿ

# ՌԴ-ի եւ ՉԺՀ-ի վետոյից հետո Արեւմուտքը խստացնում է հակասիրիական պատժամիջոցները

## *Կստեղծվի «Սիրիայի ժողովրդի բարեկամների խումբ»*




Սիրիայի վերաբերյալ Արաբական լիգայի երկրների պատրաստած նոր բանաձեւի նախագիծը ՄԱԿ-ի ԱԽ-ում քվեարկության դրվեց շաբաթ օրը: ԱԽ 15 անդամներից 7-ը փաստաթղթի համահեղինակներ էին: Քվեարկության օգտին հանդես եկան 13, դեմ՝ 2 պետությունների ներկայացուցիչներ: Այդ երկու պետություններն էին Ռուսաստանն ու Չինաստանը, որոնք ԱԽ մշտական անդամներ են եւ օգտվեցին վետոյի իրավունքից:

Նախագահ Բաշար Ասադի հրաժարականը պահանջող փաստաթղթի մերժումից հետո Արեւմուտքը պատրաստվում է Սիրիայի դեմ կիրառել ուրիշ կտրուկ պատժամիջոցներ: «Ֆայնենշըլ թայմս» թերթը հաղորդում է, որ մասնավորապես Ֆրանսիան ծրագրում է միջազգային պաշտպանություն ստանալ Բաշար Ասադի պաշտոնաթողությանը հասնելու նպատակով: Նախագահ Նիկոլա Սարկոզին հայտարարել է, որ Ֆրանսիայի կառավարությունը մտադիր է «Սիրիայի ժողովրդի բարեկամների խումբ» ստեղծել եվրոպացի եւ արաբ գործընկերներից:

ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը իր հերթին մտադրություն է հայտնել խստացնելու հակասիրիական պատժամիջոցները, որպեսզի «վարչակարգը զրկվի ֆինանսավորման աղբյուրներից» եւ չկարողանա նոր զենք ձեռք բերել: Նրա խոսքերով՝ այժմ անհրաժեշտ է «ժողովրդավարական Սիրիայի բարեկամների» միասնականություն, որպեսզի այդ երկրում վերջ դրվի բռնություններին: Քլինթոնն այդ հայտարարությունն արել է Բուլղարիա կատարած այցելության ժամանակ:

Արեւմուտքին արձագանքելով՝ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն դատապարտել է ՄԱԿ-ի ԱԽ-ում վետո դրած Ռուսաստանին ու Չինաստանին, ասելով, թե այդ քայլը համապատասխանում է «սառը պատերազմի» ժամանակաշրջանին: Դավութօղլուի խոսքերը մեջբերող Today's Zaman թերթը գրում է, թե Մոսկվայի եւ Պեկինի դիրքորոշման պատճառով «վճարելու են թուրքերը եւ արաբները»:

Հորդանանի «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական կազմակերպությունը իր հերթին բոլոր ուղղահավատներին կոչ է արել բոյկոտել ռուսական եւ չինական ապրանքները: Իսլամիստների առաջնորդ Համամ Սաիդն ասել է, թե Մոսկվան եւ Պեկինը «հայտնվեցին արաբների եւ մահմեդականների թշնամիների ճամբարում»:

ՌԴ-ի դիվանագիտական աղբյուրները հաղորդում են, որ փետրվարի 7-ին Դամասկոս կմեկնեն Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը եւ արտաքին հետախուզության ծառայության պետ Միխայիլ Ֆրադկովը: Նրանց կդիմավորի նախագահ Բաշար Ասադը:

Բուն Սիրիայում կառավարական զորքերը երկուշաբթի օրը հրետակոծել են ապստամբական ուժերի կենտրոններից մեկը՝ Հոմս քաղաքը: «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ արկերի հուժկու պայթյունները ցնցում են շենքերը: Զոհերի ստույգ թիվը չի հաղորդվում: Սիրիացի իրավապաշտպանների տվյալներով՝ Հոմսի գնդակոծությունների հետեւանքով շաբաթ օրը զոհվել էին 23, կիրակի օրը՝ 200 անձինք:

Կառավարական լրատվամիջոցները իրենց հերթին հաղորդում են, որ գրոհայինների մի շարք ահաբեկչություններից հետո բանակը նրանց հետապնդում է Հոմսի փողոցներում: «Սուրիա» հեռուստաալիքը ցուցադրում է ահաբեկչության զոհերին: Նաեւ նշվում է, որ Ասադի հակառակորդները տների տանիքների վրա ավտոդողեր են վառել, որպեսզի օդուժի ռմբակոծության պատրանք ստեղծեն:

Պ. Ք.

# Երկրաշարժ Ֆիլիպիններում

Ֆիլիպինների արշիպելագի կենտրոնական մասում երեկ կեսօրին տեղի է ունեցել 6,8 մագնիտուդով երկրաշարժ՝ խուճապ առաջացնելով մի քանի քաղաքներում: Կան փլուզումներ: Տեղական իշխանություններին վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ, ըստ նախնական տվյալների, զոհվել է 43 մարդ:



Ցնցումների օջախը եղել է 46 կմ խորության մեջ: Էպիկենտրոնը Նեգրոս եւ Սեբու խտաբնակ կղզիների արանքում էր, Նեգրոսի Դումագուետե քաղաքից 70 կմ հյուսիս: Այդ մասին հաղորդել է Ամերիկյան երկրաֆիզիկական ինստիտուտը: Ցունամիի վտանգը չեղյալ է հայտարարվել, քանի որ երկրաշարժի էպիկենտրոնը եղել է ծովի խորքում՝ իրար շատ մոտիկ գտնվող հիշյալ երկու կղզիների արանքում:

# Մշակույթ

ԱՍՈՒԼԻՍՈՒՄ

## ՀՀ մշակույթի նախարարությունը շատ լուրջ անելիքներ ունի




Երեկ, կառավարության մամուլի կենտրոնում լրագրողների հետ հանդիպեց մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ ներկայացրեց 2012 թվականի գերակա խնդիրները: Դրանք հիմնականում չորսն են, ասաց նախարարը եւ մանրամասնորեն ներկայացրեց: Առաջինը վերաբերում է «Հայ գրատպության 500-ամյակին»: Նախատեսվում է լիարժեք ամփոփել այն բոլոր գրավոր ժառանգությունը, որը գտնվում է Հայաստանում: Կավարտվի Մատենադարանի հին մասնաշենքի վերանորոգումը եւ նոր ցուցադրություն կիրականացվի: Կվերանորոգվի Հանրային գրադարանի շենքն ու կբացվի գրքի նոր թանգարան: Երկրորդ գերակա խնդիրը վերաբերում է գրադարանային համակարգի զարգացմանը, որի ծրագիրը մեկնարկել է դեռ երկու տարի առաջ:

«2012 թ.-ին ամբողջովին կավարտվի 13 պետական գրադարանների հիմնանորոգման ծրագիրը եւ դրանք կվերազինվեն նոր գրքերով, մասնագետները կվերապատրաստվեն: Այժմ էլ ԱԺ-ում է գտնվում գրադարանների մասին օրենքը, որով էլ շատ հարցեր իրավաբանական լուծում կստանան», ասաց նախարարը: Երրորդ գերակա խնդիրը վերաբերում է գրքարվեստի, տառարվեստի զարգացմանը, որոնց ուղղված պետք է մի շարք ծրագրեր իրականացվեն եւ բոլոր գրավոր ժառանգության հիմքերը օգտագործվելու են, ժամանակակից տեխնիկան ներառելով: Հիշեցնենք, որ «**Ազգը**» տարեվերջին նախարարի հետ ծավալուն հարցազրույց տպագրել էր, ուստի այսօր չենք անդրադառնում արդեն իսկ հրապարակված տեղեկություններին: Չորրորդ գերակա խնդիրը վերաբերում է թանգարաններում էլեկտրոնային համակարգի ներդրմանը: 22 թանգարանում տեղադրվում են էլեկտրոնային սպասարկման կետեր, որոնք թանգարանային ողջ ֆոնդերը կբացեն հանրության առաջ: Կբացվեն վիրտուալ թանգարաններ՝ գրքի եւ գորգի, որտեղ կզետեղվի գրքի ու գորգի ողջ պատմությունը:

Առաջին անգամ մեզանում ներդրվելու է էլեկտրոնային տոմսերի վաճառքը, որը կներառի նաեւ ամբողջ մշակութային դաշտի էլեկտրոնային բանկը, բոլոր տեղեկատվությամբ: Հանրապետության 10 մարզային գրադարաններ այս տարի ամբողջովին կվերազինվեն ու կմատակարարվեն գույքով, իսկ գրադարանավարները կանցնեն հատուկ դասընթացներ օտարերկրյա մասնագետների մոտ, որակը ապահովելու համար: Մինչեւ տարեվերջ ամբողջովին կվերակառուցվի եւ կվերազինվի նոր բեմական, լուսային ու ձայնային տեխնիկայով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնը:

Հուշարձանների վերականգնման ոլորտում այս տարի նախատեսված է յոթ ծրագիր իրականացնել մասնավոր հատվածի հետ: Ծրագրում ընդգրկվել է Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի հուշարձանի վերականգնումը: Հաջորդը՝ Մխիթար Գոշի գերեզմանատան վերանորոգումն է, ռուսպարսկական պատերազմում զոհված ռուս զինվորների հուշարձանը, Վարագավանքը, Ծովինար գյուղի եկեղեցին: Հաջորդ ծրագրում տեղ են գտել Դաշտադեմի ամրոցը եւ Թարգմանչաց եկեղեցին:

«**Ազգի**» հարցին, թե ո՞ւմ պահպանության տակ է Կոնյակի գործարանի բակում տեղադրված Նոր Ջուղայից բերված խաչքարի եւ Հայ-ռուսական բարեկամության հուշաղբյուրի անվտանգությունը, նախարարը տեղեկացրեց, որ ընթացքի մեջ է երկուստեք կնքվող իրավաբանական պահպանական պարտավորագիրը, որով էլ գործարանի տարածքում գտնվող հուշարձանները ժամանակավոր ծածկի տակ կդրվեն ու նրանց հետագա պահպանությունը կհստակեցվի:

Իսկ այն հարցին, թե Անահիտ աստվածուհու արձանը ե՞րբ կվերադարձվի, նախարարն ասաց, որ շատ լավ նախաձեռնություն է կրթության նախարարի կողմից, բայց Բրիտանական թանգարանում գտնվող արժեքավոր ցուցանմուշն այդքան էլ հեշտ չէ Հայաստան բերելը: Եթե ստացվի, իհարկե, շատ լավ գործ արած կլինի Արմեն Աշոտյանը: Հուսանք:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Տնից թանգարան՝ մեկ քայլ է

***Ճանաչված նկարչուհի, ազգագրագետ Լուսիկ Ագուլեցին չորս տասնամյակից ավելի հնաոճ իրեր է հավաքում, եւ այսօր արդեն ունի 2000-ի հասնող թանգարանային նմուշներից բաղկացած հավաքածու: Դրանք ներկայացնում են ինչպես հայերի, այնպես էլ մեր հարեւան ժողովուրդների կենցաղավարությունը, մշակույթը, արհեստներն ու քաղաքակրթությունը: Առանձնացված է նաեւ միջինասիական հավաքածու: Լուսիկ Ագուլեցին դրանք գնել է տարբեր մարդկանցից, տարբեր ժամանակներում, այսօր էլ, շատերն իմանալով նկարչուհու նախասիրության մասին՝ առաջարկում են արժեքավոր իրեր, նա էլ, ինչ գնով էլ լինի, բաց չի թողնում իր հավաքածուն նոր ու բացառիկ իրերով համալրելու հնարավորությունը:***

**- Տիկին Լուսիկ, եթե նյութական արժեքով գնահատելու լինենք Ձեր հավաքածուն, որքա՞ն է դրա գինը:**

- Ստույգ գին ասել չեմ կարող, բայց՝ միլիոններ, դե պատկերացրեք, որ տասնյակ տարիներ իմ նկարների վաճառքից ստացված գումարի կեսից ավելին նվիրել եմ հնաոճ իրեր ձեռք բերելուն, ավելացրած նաեւ ընտանիքիս ներդրումները: Ես, իսկապես, երջանիկ մարդ եմ, քանի որ հարազատներս եւս գիտակցել են իմ արածի կարեւորությունը եւ ինձ աջակցել են թե՛ հոգեպես, թե՛ ֆինանսապես:

**- Վերջին անգամ ե՞րբ եք Ձեր հավաքածուն համալրել եւ ի՞նչ իրերով:**

- Մի-երկու ամիս առաջ ես Իջեւան էի գնացել՝ նկարելու, տեղացիները դիմեցին ինձ՝ առաջարկելով կժերի հավաքածու: Ես ինչպե՞ս կարող էի հրաժարվել, միանգամից 30 կուժ՝ արժեքավոր, հին վարպետների ձեռքի ու մտքի աշխատանք: Այդպես հաճախ է եղել. Հայաստանի մարզերից ես միշտ տուն եմ վերադարձել հնաոճ մի նոր իրով: Խորհրդային տարիներին, երբ Նախիջեւան գնալու հնարավորություն դեռ ունեի, Շամխորից, Ագուլիսից, այլ քաղաքներից եւ գյուղերից հավաքածուիս համար բացառիկ իրեր էի գնում: Իմ հավաքածուում առանձին տեղ են զբաղեցնում կանացի զարդերը, զգեստները, ժողովրդական կենցաղավարության բազմաթիվ ու բացառիկ առարկաներ, գորգեր, աղոթագորգեր, խնոցիներ, զենքեր, ծիսական իրեր, Տիգրան Մեծի, Լեւոն արքայի պատկերներով դրամներ. մի խոսքով՝ իմ հավաքածուով կարելի է պատկերացում կազմել ոչ միայն մեր, այլ նաեւ մեր հարեւան ժողովուրդների մշակույթի, կենցաղի, արհեստների ու արվեստների մասին:

**- Տիկին Լուսիկ, իսկ ինչպե՞ս եք այդ ամենը պահպանում. փաստորեն Ձեր տունն իսկական թանգարան է՝ պաշտոնապես չգրանցված:**

- Տունս 500 քմ է, եռահարկ, ունի 15 սենյակ, որոնցից մի քանիսն է զբաղեցնում իմ ընտանիքը, մնացածը հատկացված է այսպես ասած՝ թանգարանիս: Դե պատկերացրեք՝ ձմեռ-ամառ պետք է պահպանել նույն ջերմաստիճանը, որպեսզի հնաոճ իրերը չփչանան: Բացի այդ, ընտանիքս մշտական վախի ու անհանգստության մեջ է ապրում:



**- Ձեր ասածից հասկանում եմ, որ կողմնակի աչքերն անտարբեր չեն Ձեր տան նկատմամբ, գողության փորձեր եղե՞լ են:**

- Հենց այդ փորձերը նկատի ունենալով եմ ասում, որ վախենում եմ լուրջ ու ճակատագրական դեպքերից: Հիմա էլ վախենալով եմ պատմում իմ հավաքածուի մասին, որովհետեւ գուցեեւ ոչ բարի մղումներով մարդի՞կ գայթակղվեն: Ամբողջ կյանքում հավաքել եմ հնաոճ ու արժեքավոր իրեր ու չեմ պատկերացրել, որ մի օր դրանք այնքան են շատանալու, որ մի ամբողջ թանգարան են ներկայացնելու, նաեւ վտանգ՝ ընտանիքիս համար: Եկել է ժամանակը, որ այդ ոչ պաշտոնական թանգարանը որոշակի կարգավիճակ ստանա: Ի վերջո, ես սերունդների, իմ ժողովրդի համար եմ այդ բոլորը մեկտեղել: Փաստորեն մոտ 2000 իր փրկել եմ պատահական մարդկանց ձեռք ընկնելու հավանականությունից, վերջապես դրանք ինձ ոչ ոք չի նվիրել, չէ՞, հատ-հատ գնել եմ, բայց պահել-պահպանել այլեւս ի վիճակի չեմ:

**- Ենթադրում եմ, որ ինչ-որ քայլեր եք ծրագրել՝ հավաքածուի հետագա ճակատագիրը որոշակիացնելու համար, այո՞:**

- Այո՛, դիմել եմ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին: Նա էլ խոստացել է գալ իմ տուն եւ ամեն ինչ տեղում քննարկել: Ես չեմ առաջարկում իմ թանգարանին առանձին շենք կամ սրահներ հատկացնել, թող այն մնա իմ տանը կամ նոր շինարարության միջոցով սենյակներ ավելացվեն՝ բոլոր իրերը ցուցադրելու համար, ու լավ կլիներ, եթե պետությունը դրանց պահպանության, անվտանգության ապահովման խնդիրը լուծեր: Թող թեկուզ իմ ընտանիքը շարունակի ապրել նույն տանը: Շատ եմ ուզում, որ այստեղ միջոցառումներ, ընդունելություններ կազմակերպվեն: Պատկերացրեք՝ օտարազգի հյուրերը գան ու ծանոթանան այս իրերին, նրանց համար տեղում ծիսական ընդունելություն, հայկական ազգային կոլորիտով հյուրասիրություն կազմակերպվի, մանավանդ որ ես բոլոր պայմանները ունեմ, ամեն ինչի մասին հոգացել եմ: Սա կդառնա դրսի աշխարհից ու իրականությունից կտրված մի միջավայր, որը մեծ տպավորություն կգործի հյուրերի վրա: Վստահ եմ, որ մեր ժողովուրդն էլ մեկ-մեկ կուզի կտրվել միանման ու տաղտկալի միջավայրից ու աչքի համար անսովոր, հետաքրքիր բաներ տեսնի: Մնում է կյանքի կոչել իմ ծրագիրը: Կրկնում եմ՝ ես այս ամենն արել եւ անում եմ գալիք սերունդների համար, բայց թանգարանային 15 սրահ պահել, դրանց անվտանգությունն ապահովել, խնամել, 100000-ներ վճարել կենցաղային ծախսերի համար ընտանիքիս պարտադրել այլեւս չեմ կարող: Այս հարցը շուտափույթ լուծում է պահանջում: Պետական հովանավորությունը նաեւ անձեռնմխելի կդարձնի թանգարանային նմուշները:

Լուսիկ Ագուլեցու հսկայական տան յուրաքանչյուր անկյունն այցելուին կտրում է իրականությունից ու տանում հազարամյակներ հետ՝ դեպի հին ու փառավոր մշակույթ, հետաքրքիր ու ինքնատիպ քաղաքակրթություն: Նկարչուհի-ազգագրագետն ուզում է իր տունը ուսուցման, մշակույթի, արհեստների ու արվեստների հետ կենդանի շփման կենտրոն դարձնել: Եվ ուզում է անվտանգ ապրել: Հո կրակը չի՞ ընկել, որ հնաոճ ու բազմաոճ իրերի շքեղ հավաքածու է ստեղծել: Ի վերջո, բացի իրենից ու իր ընտանիքի անդամներից, ուրիշ ոչ ոք այդ թանգարանի ստեղծման համար ոչ մի ներդրում չի արել, ջանք չի թափել: Պատրաստի թանգարան է, մնում է որոշակի կարգավիճակ տալ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## Իրանահայ արհեստաւորները ցուցադրեցին իրենց արտադրանքը

Օրերս Թեհրանում տեղի ունեցաւ իրանահայ արհեստաւորների արդիւնաբերութիւնների ու տեխնիկական ձեռքբերումի 5-րդ ցուցահանդէսը, որը կազմակերպւում է Իրանի Իսլ. Յեղափոխութեան տարեդարձի առիթով՝ «Իրանի Հայ արհեստաւորների միութեան» նախաձեռնութեամբ:

Բացումը կատարեց Իսլամական խորհրդարանի ճարտարարւեստի, արդիւնաբերութեան եւ հանքերի յանձնաժողովի նախագահ՝ ճրտգ. Հաշեմին եւ Թեհրանի եւ հիւսիսային Իրանահայութեան պատգամաւոր եւ նոյն յանձնաժողովի անդամ Գէորգ Վարդանեանը:

Բացման արարողութեան ընթացքում արտայայտւեցին միութեան նախագահ Հայրիկ Աւետեանը, Գէորգ Վարդանեանը եւ Հաշեմին, որոնք մեծապէս գնահատեցին հայ արհեստաւորների գործունէութիւնը:

Յիշեալները եւ պետական այլ ազդեցիկ հիւրերն ապա այցելեցին շուրջ 50 տաղաւարներ, ու մօտից ծանօթացան նրանց կարողականութիւնների հետ:

Ցուցահանդէսը կազմակերպւել է Թեհրանի «Արամ Մանուկեան» ազգային սրահում եւ տեւելու է մինչեւ փետրւարի 9-ը:

Իրանում (Թեհրան), արդէն շուրջ 20 տարի է, ինչ աշխատում է «Իրանի Հայ արհեստաւորների միութիւն»ը, որն իր շուրջ է համախմբել իրանահայ արհեստաւորներին, որոնք Իրանի հասարակութեան մօտ ճանաչւած են որպէս ճշտապահ եւ շինարար անձիք, եւ որոնց հեղինակութեան ու տաղանդի շնորհիւ միշտ էլ իրանահայութիւնը վայելում է բարի համբաւ ու վստահութիւն:

Իրականութեան մէջ էլ Իրանի մայր ճարտարարւեստի ու արդիւնաբերութեան ռահվիրաները հայերն են, որոնք ժամանակին տիրապետելով ճարտարարւեստի ու արդիւնաբերութեան գաղտնիքներին, իրենց ձեռքն են առել երկրի մանաւանդ ծանր արդիւնաբերութեան ու ճարտարարւեստի զարկերակը:

Մանաւանդ մեքենայաշինութեան, պլաստիկի եւ դայքասի սրսկիչ գործիքների, ճարտարարւեստական ծանր ճնշիչ մամուլների, աւտոմեքենաների մասերի, քիմիական, մետաղի ու հիւսւածքների փայլի եւ ուտեստեղէնի արդիւնաբերութիւններում իրանահայերն իրենց մեծ ներդրումներն են ունեցել Իրանում, եւ այսօր նրանք այսպիսի անցեալի ապաւինելով խորապէս յարգւած են թէ՛ Իրանի հասարակութեան եւ թէ՛ իշխանութիւնների կողմից, որպէս շինարար ու կառուցող հասարակութիւն:

Վերջին 30 տարիներին, դժբախտաբար, մի տեսակ նահանջ նկատւեց այս տարրի մէջ, եւ նրանցից ոմանք կամ իրենց զաւակներն ու երիտասարդները սկսեցին զբաղւել ոչ- արտադրական ու խաբուսիկ աշխատանքներով, որը մտահոգիչ է համայնքի ղեկավարութեան ու գործիչների համար:

Այդ մտահոգութեանը վերջ տալու համար, մի խումբ ազգայիններ, Թեհրանի Հայոց թեմական խորհրդի հովանաւորութեամբ եւ Իրանահայութեան ժամանակի պատգամաւոր պրն. Վարդան Վարդանեանի անմիջական աջակցութեամբ 1994 թւականի դեկտեմբերին պաշտօնապէս կեանքի կոչեց «Իրանի Հայ արհեստաւորների միութիւն»-ը:

Միութիւնն հրաւիրելով համայնքի ճարտարարւեստի ու արդիւնաբերութեան վաստակաւոր գործիչներին եւ քննարկելով այդ մտահոգութեան տարբեր կողմերը, նոյն կենտրոնատեղի՝ «Արամ Մանուկեան» սրահում գործիքներ տեղադրելով կազմեց արհեստավարժութեան դասարաններ, որը սկզբնական շրջանում մեծապէս ընդառաջւեց երիտասարդութեան կողմից:

ՎԱՐԴԱՆ ԴԱՒԹԵԱՆ
Թեհրան

# Մարզական

## Հայաստանի ըմբիշների հաջող ավարտը

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում անցկացված ըմբշամարտի միջազգային մրցաշարում հաջող ելույթներ ունեցան Հայաստանի ներկայացուցիչները, որոնք ընդհանուր առմամբ նվաճեցին 2-ական ոսկե եւ արծաթե ու 4 բրոնզե մեդալ:

Ազատ ոճային ըմբիշներից առավել հաջողը 96 կգ քաշային Հաջիմուրադ Նուրմագոմեդովի ելույթն էր: Հաղթելով իր բոլոր մրցակիցներին, Նուրմագոմեդովը կանգնեց պատվո պատվանդանի առաջին աստիճանին:

Մինչեւ 55 կգ քաշային կարգում Գեղամ Բաբախանյանը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվեց ռուսաստանցի Վլադիսլավ Պետրովին ու բավարարվեց 2-րդ տեղով: Նույն քաշային կարգում հանդես եկած Միհրան Ջաբուրյանը դարձավ բրոնզե մեդալակիր: 3-րդ մրցանակակիր դարձավ նաեւ գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը:

Հունահռոմեական ոճի ըմբիշներից լավագույնը հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանի կրտսեր որդին էր՝ Արամը: Եզրափակիչում նրա մրցակիցն իր թիմակից Հովհաննես Վարդերեսյանն էր: Հաջողությունն ուղեկցեց Արամին: Բրոնզե մեդալի արժանացավ Շվեդիան ներկայացնող Շառուր Վարդանյանը:



Հայ ըմբիշներից բրոնզե մեդալներ նվաճեցին նաեւ Արթուր Մկրտչյանն (60 կգ) ու Հրաչյա Հովհաննիսյանը (84 կգ):

Մրցաշարը մասնակիցների համար կարեւոր ստուգատես էր մարտի 4-ին Բելգրադում մեկնարկելիք Եվրոպայի առաջնությունից առաջ: Ընդ որում առաջնությունում օլիմպիական ուղեգրեր չեն խաղարկվելու: Վարկանիշային մրցաշարերը տեղի կունենան Բուլղարիայում, Չինաստանում եւ Ֆինլանդիայում ապրիլ-մայիս ամիսներին: Հիշեցնենք, որ ազատ եւ հունահռոմեական ոճերի ըմբշամարտում Հայաստանի մարզիկները առայժմ մեկական ուղեգիր են նվաճել:

Սոֆիայում երկարատեւ ընդմիջումից հետո կրկին մրցագորգ դուրս եկավ նախկին գյումրեցի, Շվեդիան ներկայացնող փորձառու ըմբիշ, 36-ամյա Արա Աբրահամյանը: Նա հանդես եկավ իր համար նոր՝ մինչեւ 96 կգ քաշային կարգում: Արան համեստ արդյունք ցույց տվեց՝ 24 մասնակիցների մեջ գրավելով 18-րդ տեղը: Հիշեցնենք, որ 2008-ին Արա Աբրահամյանը պարգեւատրման ժամանակ բրոնզե մեդալից ցուցադրաբար հրաժարվելու համար որակազրկվել էր:

## Բաղդասարյանին հավաքականի ղեկը վստահելը ոգեւորել է ամերիկահայերին

Ինչպես տեղեկացրել ենք, օրերս բասկետբոլի Հայաստանի ֆեդերացիայի հանրապետության տղամարդկանց ազգային հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակել ամերիկահայ փորձառու մասնագետ Կարլ Բաղդասարյանին, որի գլխավորությամբ անցյալ տարի Լոս Անջելեսի թիմը դարձել էր Համահայկական խաղերի չեմպիոն:



Ըստ «Ազգի» ստացած հաղորդագրության, Հայաստանի հավաքականի ղեկը Բաղդասարյանին վստահելը մեծ ոգեւորությամբ է ընդունվել ԱՄՆ-ում, հատկապես ամերիկահայերի շրջանում: Մի շարք լրատվամիջոցներ մեկնաբանել են այդ լուրը, տեղեկություններ են հրապարակել Բաղդասարյանի մարզչական գործունեության մասին: Բաղդասարյանը բազմաթիվ շնորհավորանքներ է ստացել ամերիկահայերից: Օրինակ, ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության Նյու Յորքի գրասենյակի ղեկավարներից Քրիստոֆեր Պողոսյանը հետեւյալն է նշել. «Շատ ոգեւորվեցի, տեղեկանալով, որ Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակվել Կարլ Բաղդասարյանը: Դա հիանալի է, նա կարող է դրական լիցքեր հաղորդել բասկետբոլիստներին եւ հաջողության հասնել: Կարլը մարզչական զգալի փորձ ունի, իր ուժերը կներդնի հայ բասկետբոլիստների հաջող ելույթների համար, ինչը հայերին հպարտանալու առիթ կտա»: Բաղդասարյանին շնորհավորողների թվում է նաեւ նախկին բասկետբոլիստ Ջիմի Քինգը:

Բաղդասարյանը շատ լավ ճանաչում է ԱՄՆ-ում հանդես եկող հայազգի բասկետբոլիստներին ու մտական կապի մեջ է նրանցից շատերի հետ: Մարզիչը հենց ԱՄՆ-ում է սկսելու նախապատրաստել ՀՀ հավաքականին ամռանը կայանալիք Եվրոպայի առաջնության C խմբի մրցաշարին: Հավաքականի կազմում կընդգրկվեն նաեւ Ռուսաստանում ու Իրանում հանդես եկող հայազգի բասկետբոլիստները:

## «Շիրակը» գերազանցեց «Արարատին»

Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում Գյումրիի «Շիրակը» ստուգողական հերթական հանդիպումն անցկացրեց «Արարատի» հետ: 42-րդ րոպեին Հովհաննես Գրիգորյանի փոխանցումից հետո Դավիթ Հակոբյանը գլխի հարվածով բացեց հաշիվը: 2-րդ խաղակեսի սկզբում աչքի ընկավ թիմում փորձաշրջան անցնող Ժան Լուի Բեռնը՝ ամրապնդելով «Շիրակի» հաղթանակը:

«Շիրակի» մարզիչները հրաժարվել են թիմում փորձաշրջան անցնող 2 լեգեոնականներից: Մյուս նորեկների մասին վերջնական կարծիք կձեւավորվի ուսումնամարզական հաջորդ հավաքից հետո, որը կանցկացվի փետրվարի 10-ից Անթալիայում: Ինչ վերաբերում է արարատցիներին, ապա թիմը շարունակում է մարզվել Ջրաղբյուրում: Մարզիչները փորձարկում են մի խումբ երիտասարդ ֆուտբոլիստների: «Արարատում» է մարզվում թիմի նախկին ֆուտբոլիստ Արթուր Պետրոսյանը, որը նախորդ մրցաշրջանում հանդես էր գալիս Դիլիջանի «Իմպուլսում»:]

## «Դեյուֆը» շարունակում է հաղթարշավը

Ձմռան նախապատրաստական շրջանում իր արդյունքներով զարմացնում է Աբովյանի նորաստեղծ «Դեյուֆը», որն անցկացրած 5-րդ խաղում էլ հաղթեց: Արմեն Սանամյանի սաները 4 անպատասխան գնդակ խփեցին «Փյունիկ-2»-ի դարպասը: 2 գոլի հեղինակ դարձավ նախկին փյունիկցի Միհրան Մանասյանը, մեկական անգամ աչքի ընկան Արա Հովհաննիսյանն ու Ավագ Մարգարյանը: Այսօր «Դեյուֆը» կմրցի Դիլիջանի «Իմպուլսի» հետ:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## Վանես Մարտիրոսյանը պահպանեց գոտին



Պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի Վանես Մարտիրոսյանը հերթական՝ 32-րդ հաղթանակը տոնեց: ԱՄՆ-ի Տեխասի նահանգի Սան Անտոնիո քաղաքում անցկացված մենամարտում 25-ամյա Վանեսը տեխնիկական նոկաուտով արդեն 3-րդ ռաունդում պարտության մատնեց 41-ամյա ամերիկացի Տրոյ Լոուրիին: 10-ռաունդանոց մենամարտում Վանեսի առավելությունը զգալի էր, ինչն էլ արտահայտվեց վերջնական արդյունքում: Վանես Մարտիրոսյանը պահպանեց առաջին միջինքաշային կարգում WBC-ի արծաթե իր գոտին:

Տրոյ Լոուրիի համար հերթական մենամարտը 40-րդն էր: Նա 12-րդ պարտությունը կրեց:

## Լավագույնը Լիլիթ Գալոյանի ելույթն էր

Մոսկվայում ավարտվեց շախմատային փառատոնը, որի մասնակիցների թվում էին նաեւ Հայաստանի ներկայացուցիչները:

Կանանց մրցաշարում առավել հաջող հանդես եկավ Լիլիթ Գալոյանը, որը 6,5 միավորով զբաղեցրեց 9-րդ հորիզոնականը: Ավարտական 3 տուրերում Լիլիթը հաղթեց Օլգա Իվկինային, հաշտություն կնքեց Մարիա Մանակովայի եւ Վիկտորիա Տարասովայի հետ:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ Եվգենիա Դոլուխանովան 6 միավորով գրավեց 20-րդ տեղը: Նա 7-8-րդ տուրերում հաղթեց Լյուբով Կոստիցինային եւ Բատխույագ Մոնգոնտուլին, իսկ ավարտական մրցախաղում զիջեց Դարիա Չարոչկինային: Կարինա Համբարձումովան, որ մտապես առաջատարների խմբում էր, վերջնագծում միայն 1,5 միավոր վաստակեց՝ հաշտություններ կնքելով Բատխույագ Մոնգոնտուլի, Աննա Գվանցելաձեի եւ Ալինա Բիվոլի հետ: Համբարձումովան 6 միավորով գրավեց 17-րդ տեղը: Ռուսաստանը ներկայացնող մյուս շախմատիստուհիների արդյունքն ավելի քան համեստ էր: Մարինե Գրիգորյանը 5 միավորով գրավեց 48-րդ տեղը, իսկ Կլարա Հունանյանը 154 մասնակիցների մեջ 142-րդն էր: Մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Մարինա Ռոմանկոն, որը վաստակեց 7,5 միավոր: 7-ական միավորով 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավեցին Քսիան Հուանգը եւ Դարիա Չարոչկինան:

Ուսանող շախմատիստների մրցաշարում Ավետիք Գրիգորյանը 5 միավորով 10 մասնակիցների մեջ 4-րդն էր: Ավարտական 3 տուրերում նա հաղթեց Դարիուշ Շվերցին, հաշտություն կնքեց Մուստաֆա Յիլմազի ու Վլադիմիր Բելոուսի հետ: Գլխավոր մրցանակը նվաճեց 7 միավոր վաստակած ուկրաինացի գրոսմայստեր Յարոսլավ Ժերեբուխը: 6 միավորով 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի Մաքսիմ Մատլակովը: 5,5 միավորով 3-րդ տեղում ամերիկացի Ռեյ Ռոբսոնն է, որը մրցաշարի ընթացքում գլխավորում էր աղյուսակը:

## «Ուլիսը» զիջեց Բաքումի «Դինամոյին»

Ուռեկիում անցկացրած ստուգողական առաջին խաղում ՀՀ չեմպիոն «Ուլիսը» 0-1 հաշվով զիջել է Բաթումի «Դինամոյին»: «Ուլիսի» գլխավոր մարզիչ Սեւադա Արզումանյանը խաղադաշտ է դուրս բերել հավաքին մասնակցող 24 ֆուտբոլիստներից 22-ին: Փետրվարի 7-ին «Ուլիսը» կմրցի Վրաստանի բարձրագույն խմբի առաջնության մասնակից «Մերանիի» հետ: Փետրվարի 10-ին մրցակիցը կլինի Զուգդիդիի «Բայա», իսկ 2 օր անց «Ուլիսը» կմրցի «Գուրիայի» հետ: Ընկերական վերջին խաղը նախատեսվում է անցկացնել փետրվարի 15-ին:

## Հայ շախմատիստները Բունդեսլիգայում

Կայացան շախմատի Գերմանիայի բունդեսլիգայի ակումբային առաջնության 8-րդ եւ 9-րդ տուրերի հանդիպումները: Տեղի «Բեռլինի» կազմում են Լեւոն Արոնյանն ու Հրանտ Մելքումյանը: 8-րդ տուրում «Բեռլինը» 2-6 հաշվով զիջեց առաջնության միանձնյա առաջատար «Բադեն Բադենին», որի կազմում ելույթ է ունենում ՀՀ հավաքականի մեկ այլ անդամ՝ Սերգեյ Մովսիսյանը: Արոնյանն ու Մելքումյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Ալեքսեյ Շիրովի եւ Վայտխոյի հետ, իսկ Մովսիսյանը հաղթեց Ալեքսանդր Մախիմենկոյին:

9-րդ տուրում «Բեռլինը» 4,5-3,5 հաշվով հաղթեց «Տրիերին»: Այդ հաղթանակում իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան հայ շախմատիստները: Լեւոն Արոնյանը պարտության մատնեց անգլիացի Դեւիդ Հաուելին, իսկ Մելքումյանն առավելության հասավ մոլդովացի Կոնստանտին Լուպուլեսկուի նկատմամբ:

Տուրը հաջող էր նաեւ «Բադեն Բադենի» համար, որն առավելության հասավ «Համբուրգի» նկատմամբ: Մովսիսյանը հաղթեց Ռոգոզենկոյին: 9 տուրից հետո 16 միավորով «Բադեն Բադենը» գլխավորում է աղյուսակը, իսկ «Բեռլինը» 10 միավորով 16 թիմերի մրցավեճում ընթանում է 7-րդ տեղում:

## Հաքերները «ջարդել» են սամբոյի ֆեդերացիայի կայքը

Ինչպես տեղեկացանք սամբոյի Հայաստանի ֆեդերացիայից, արդեն մեկ շաբաթից ավելի է, ինչ չի գործում sambo.am պաշտոնական կայքը: Ըստ կայքը շահագործող «Ալտեգա» ընկերության մասնագետների, դա ադրբեջանցի հաքերների ձեռքի գործն է, քանի որ կայքի գլխավոր էջում զետեղված ՀՀ եւ ԼՂՀ միացյալ քարտեզների փոխարեն բացվում էր այդ պետության դրոշը: Սա համանման արդեն 3-րդ դեպքն է: Ներկայումս ընթանում են կայքի վերականգնման եւ վերագործարկման աշխատանքները:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Հարկեք եւ կանոնակարգեք շաքարի առեւտուրը ալկոհոլի եւ ծխախոտի նման, պնդում են գիտնականները

Շաքարը նույնքան թունավոր է լյարդի համար, որքան ալկոհոլը. գիրության ու լյարդի որոշ հիվանդությունների սկզբնաղբյուր է, ասում են ԱՄՆ գիտնականները:

Շաքարը պետք է կանոնակարգվի այնպես, ինչպես ալկոհոլը եւ ծխախոտը, քանի որ դրա գնալով աճող օգտագործումը մշակված սննդամթերքի մեջ էական վտանգ է ներկայացնում հասարակության առողջության համար, պնդում են մի խումբ գիտնականներ: Նրանք կողմնակից են, որ շաքարով սննդամթերքը հարկվի, իսկ դրանց վաճառքը մինչեւ 17 տարեկաններին՝ վերահսկվի:

Շաքարը, ինչպես պնդում են նրանք, նույնքան թունավոր է լյարդի համար, որքան ալկոհոլը, եւ դրա չափից ավելի օգտագործումը հասարակության առողջության հետ կապված աճող խնդիրների սկզբնաղբյուր է՝ ներառյալ գիրությունը եւ լյարդի որոշ հիվանդությունները:

Ըստ «Բնություն» (Nature) ամսագրում հրապարակված հոդվածի, Կալիֆոռնիայի Սան Ֆրանցիսկո համալսարանի (ԿՍՖՀ) գիտնականներ Ռոբերթ Լասթիգը, Լաուրա Շմիդթը եւ Քլեր Բրինդիսը ասում են, որ վերջին 50 տարիներին շաքարի սպառումը աշխարհում եռապատկվել է: «Իշխանությունները շաքարը համարում են «դատարկ կալորիաներ», բայց դա այդպես չէ: Ավելի շատ ուսումնասիրություններ են ապացուցում, որ մրգաշաքարը (ֆրուկտոզ) կարող է այնպիսի գործընթացների սկիզբ դնել օրգանիզմում, որոնք հանգեցնում են լյարդի թունավորման եւ շատ այլ խրոնիկ հիվանդությունների: Փոքր քանակությամբ օգտագործումը խնդիր չէ, բայց մեծ քանակությունը դանդաղ սպանում է»:

Մարդկության պատմության մեջ առաջին անգամ երկարաժամկետ հիվանդությունները, ինչպես օրինակ՝ սրտային հիվանդությունները, քաղցկեղը եւ շաքարախտը, այսօր, ըստ ՄԱԿ-ի, ավելի մեծ վտանգ են ներկայացնում աշխարհում, քան վարակիչ հիվանդությունները՝ տարեկան 35 մլն մարդու կյանք խլելով: «Այսօր գեր մարդիկ 30 տոկոսով ավելի շատ են, քան թերասնվածները», ասում են ԿՍՖՀ գիտնականները:

«Տնտեսական զարգացումը նշանակում է, որ ցածր եւ միջին եկամուտ ունեցող երկրների բնակիչները ավելի երկար են ապրում, եւ այս պատճառով էլ ավելի շատ են հակված դեպի ոչ վարակիչ հիվանդությունները. մահերի 80 տոկոսը, որոնք վերագրվում են հենց այս հիվանդություններին, պատահում են նշված երկրներում»:

Հասարակական առողջապահության հարցերով զբաղվող միջազգային կառույցները, ըստ գիտնականների, պետք է միջոցառումներ ձեռնարկեն՝ սահմանափակելու շաքարի օգտագործումը, մասնավորապես մրգաշաքարի (ֆրուկտոզ), մրգաշաքարով հարուստ եգիպտացորենի օշարակի եւ բուսաշաքարի (սախարոզ):

Ճարպերը եւ աղը սահմանափակելուց զատ, սննդամթերքի կարգավորման մարմինները իրենց ուշադրությունը պետք է կենտրոնացնեն «ավելացված շաքարի» վրա, որոնք, ըստ ԿՍՖՀ-ի թիմի, կարող են լինել մրգաշաքար պարունակող բոլոր քաղցրացնող միջոցները, որոնք ավելացվում են սննդամթերքին մշակման ժամանակ:

Շաքարը խթանում է «նյութափոխանակման սինդրոմի» հետ կապված շատ հիվանդություններ՝ ներառյալ արյան բարձր ճնշումը, շաքարախտը եւ ժամանակից շուտ ծերացումը: «Դա կարող է նաեւ հաստատել, որ մրգաշաքարը թունավոր ազդեցություն է ունենում լյարդի վրա ալկոհոլի նման», ասում են գիտնականները, «եւ զարմանալի չէ, քանի որ ալկոհոլը առաջ է գալիս շաքարի խմորումից»:

Ըստ նախնական ուսումնասիրությունների՝ շաքարի օգտագործումը կապում են այնպիսի հիվանդությունների հետ, ինչպիսիք են քաղցկեղը եւ ճանաչողական շեղումները: «Հետեւաբար, մենք առաջարկում ենք ավելացնել հարկերը այն մշակված սննդամթերքների վրա, որոնք պարունակում են շաքարի որեւէ տեսակ: Սրանք կներառեն նաեւ քաղցրացված, գազավորված ըմպելիքները, այլ քաղցրացված ըմպելիքները, օրինակ՝ հյութերը, սպորտային խմիչքները կամ շոկոլադե կաթերը եւ այլն: Միջոցառումներից մեկն էլ կլինի այն, որ կսահմանափակվի նմանատիպ սննդամթերքների վաճառքը դպրոցական ժամերին, կամ տարիքային սահմանափակում կդրվի դրանց վրա, օրինակ՝ ավելացված շաքարով խմիչքների վաճառքը, մասնավորապես գազավորված ըմպելիքներինը կարգելվի մինչեւ 17 տարեկաններին», առաջարկում են գիտնականները:

Որ շաքարը այդքան մեծ խնդիր է դարձել այսօր, հիմնականում այն պատճառով է, որ ժամանակակից հասարակության մեջ անհնար է խուսափել դրանից, ասում են գիտնականները: «Մեր նախահայրերը շաքարից օգտվում էին միայն մրգերի տեսքով եւ տարվա մեջ միայն մի քանի ամիս (բերքահավաքի ժամանակ), կամ էլ որպես մեղր, որը հսկվում էր մեղուների կողմից: Բայց վերջին տարիներին շաքարը ավելացնում են համարյա բոլոր մշակված սննդամթերքների մեջ՝ դրանով իսկ սահմանափակելով ընտրության հնարավորությունը: Բնությունը այնպես է արել, որ շաքարը դժվար հասանելի լինի, իսկ մարդիկ հեշտացրել են»:

Մեծ Բրիտանիայի շաքարի արտադրողների կողմից ֆինանսավորվող «Շաքարային սնունդ» ընկերության խոսնակն ասում է, որ երկար տարիներ մի շարք փորձագիտական հանձնաժողովներ, ներառյալ Սննդամթերքի անվտանգության եվրոպական մարմնի եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնաժողովները, ուսումնասիրել են շաքարի եւ այլ ածխաջրերի հետ կապված գիտական տվյալները: «Բոլորը եզրակացության են եկել, որ առկա ուսումնասիրություններով այսօր սպառվող շաքարի քանակությունը չի կարող կապ ունենալ այնպիսի հիվանդությունների առաջացման հետ, ինչպիսիք են գիրությունը, շաքարախտը, սրտի իշեմիկ հիվանդությունը, քաղցկեղը»:

Այնուամենայնիվ, Մեծ Բրիտանիայի քաղցկեղի հետազոտության կենտրոնի գիտա-տեղեկատվական բաժնի ավագ մենեջեր, դոկտոր Ջուլի Շարփը ասում է, «Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավելորդ քաշը կապ ունի քաղցկեղի տարեկան ավելի քան 17000 դեպքերի հետ Մեծ Բրիտանիայում՝ դառնալով ծխելուց հետո ամենառիսկային գործոններից մեկը քաղցկեղի դեպքում»:

«Շաքարի օգտագործման սահմանափակումը այն կարեւոր քայլերից է, որ մարդիկ կարող են անել՝ ունենալու առողջ քաշ, միեւնույն ժամանակ հետեւելով իրենց սննդակարգին՝ ուտելով շատ մրգեր ու բանջարեղեն եւ քիչ քանակությամբ կարմիր ու մշակված միս՝ հագեցած ճարպով ու աղով»:

**guardian.co.uk,**
**Թարգմ.**
**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

# Ինչու է դատախազությունը խստացնում պատիժը

Անցած տարվա սեպտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը ժամը 5-ի սահմաններում Հրազդանի կիրճում տեղի է ունեցել կողոպուտ: Ազգությամբ հայ Բաբկենը, Գուրգենը, Սամվելն ու Արթուրը զինված վիճակում կյանքի համար թեթեւ վտանգ չներկայացնող հարվածներ հասցնելով կողոպտել էին Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների: Ձերբակալվելուց եւ 4 ամիս կալանքի տակ պահվելուց հետո դատավոր Վազգեն Ռշտունու կայացրած դատավճռով երիտասարդները, որոնք ունեին դրական բնութագիր, զինվորական ծառայության տարիներին վաստակած պաշտոններ ու շնորհակալագրեր, գրավի դիմաց ազատ էին արձակվել: Նշենք, որ հայցվոր կողմը բողոք չէր ներկայացրել ու նույնիսկ դատական նիստերին չէր ներկայացել:

Սակայն, չգիտես ինչու, ՀՀ գլխավոր դատախազությունը մեղմ է համարել պատիժը եւ նոր դատ նշանակել, որը կկայանա փետրվարի 15-ին: Մենք անպայման կհետեւենք իրադարձությունների զարգացմանը:

**ԱՐՍԵՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ**

ԵՐԿԵՐԵՍԱՆԻ

# «Գայլի հետ գառը ուտում, տիրոջ հետ ողբում են»

*1-ին էջից*

**- Իհարկե: ԽՍՀՄ փլուզումն ազգային էլիտաների էգոիզմի արդյունք էր: Մի շարք հանրապետություններում ազգային էլիտաներն սկսեցին հետապնդել սեփական նեղ-շահադիտական նպատակներ: Դրանց հասնելու համար նրանք պատրաստ էին գնալ ամեն ինչի: Նախնական փուլում ղարաբաղյան շարժումը դավադրվում էր արտասահմանից, որպեսզի ԽՍՀՄ-ը ցնցվի, ապակայունանա...**

**Ռուսաստանի համար կարելի է անկեղծորեն ցավել: Ավելի ճիշտ՝ այդ երկրի այն շրջանակների, որ դեռեւս առաջնորդվում են «Պրավդա» թերթի առաջնորդող հոդվածների «գլխավոր ուղղությամբ»: Ալեքսեյ Պոդբերեզկինի «գնահատականներից», իրոք, անցյալ դարավերջի խորհրդային մամուլին բնորոշ «հոտ է փչում»: Էլ ավելի արտառոց է, որ նման մակարդակի մարդը «կամովին» հայտնվել է Բաքվի երկրորդական նշանակության լրատվամիջոցի լարած ծուղակում:**

**Մենք ձեռնպահ ենք մնում Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումներին գնահատական տալուց: Իրողությունները, սակայն, դրանից չեն փոխվում. ԽՍՀՄ փլուզման դատավճիռը կայացրել է նախ եւ առաջ Ռուսաստանը: Ոչ մի միութենական հանրապետություն, ոչ մի «անջատողական շարժում, որքան էլ դավադրվեր արտասահմանից», ի զորու չէր լինի կազմացրել Խորհրդային Միությունը, եթե դա չցանկանար Ռուսաստանը:**

**Իսկ թե ինչո՞ւ էր Ռուսաստանը կամավոր հրաժարվում «ժողովուրդների կամքով ստեղծված միասնական, հզոր ԽՍՀՄ-ը միավորելու», ինչպես ԽՍՀՄ օրհներգում էր գրված, պատմական առաքելությունից, այդ հարցի պատասխանը պարոն Պոդբերեզկինը կարող է փնտրել Մոսկվայում. այնտեղ են, համենայն դեպս, ՌԽՖՍՀ ժողպատգամավորները քվեարկել Բելովեժյան համաձայնագիրը վավերացնելու օգտին:**

**Ստեփանակերտում մարզխորհրդի պատգամավորները միայն միջնորդել են, որ Ադր. ԽՍՀ եւ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը քննարկեն եւ դրական լուծում տան ինքնավար մարզն Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ մտցնելու հարցին: Եվ բոլոր հանրահավաքներն անցել են «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսով:**

**Իսկ Լեռնային Ղարաբաղը հանրապետություն է հռչակվել միայն այն բանից հետո, երբ Ադրբեջանի Գերագույն խորհուրդն այդ հանրապետության տարածքում կասեցրել է ԽՍՀՄ սահմանադրությունը, իրեն հայտարարել 1918-20 թ.թ. «գոյություն ունեցած Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդ»:**

**Ինչպիսի՞ն կլինի Եվրասիական միության ապագան՝ ոչ ոք չի կարող կանխատեսել: Եվ իմաստ չունի դեպքերի բնականոն ընթացքից առաջ ընկնել ու «բանաձեւել», թե դա է «ղարաբաղյան հակամարտության կարգավորման իրական ճանապարհը»: Մանավանդ՝ ԽՍՀՄ մասին նոստալգիկ ապրումների համատեքստում: Որեւէ միություն, եթե պետք է լինի կամավոր, չպետք է կողմերից մեկի շահը մյուսինին ստորադասի: Հակառակ դեպքում «կստացվի ինչպես միշտ»:**

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
Ազգ-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հարգելի ընթերցող: Սկսվել եւ շարունակվում է «Ազգ» օրաթերթի 2012 թ. բաժանորդագրությունը: Բաժանորդագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այն իրականացնող ներքոնշյալ մամուլի տարածման գործակալություններից.**

- Պրես-Ստենդ- (հեռ.՝ 54-41-99, www.armpress.am)
- Հայմամուլ- (հեռ.՝ 45-30-78, կայքէջ՝ www.haymamul.info.am)
- Հայփոստ- (հեռ.՝ 51-47-51, www.haypost.am)
- Պրես-Ատաշե- (հեռ.՝ 27-02-22, www.press-attache.am)
- Բլից Մեդիա- (հեռ.՝ 58-17-13, www.pressinfo.am)
- Թերթին կարող եք բաժանորդագրվել նաեւ Հանրապետության-47 հասցեում գտնվող խմբագրատանը (հեռ՝ 58-29-60, կայքէջ՝ www.azg.am):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Այն ընթերցողները, ովքեր կներկայացնեն թերթի բաժանորդագրության կտրոնը, իրավունք կունենան ամիսը մեկ անգամ անձնական բնույթի մեկ անվճար հայտարարություն տեղադրել թերթում, որը 1 շաբաթ կտեղակայվի նաեւ էլեկտրոնային կայքէջում:**

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

**ՍԱՐԻ ԹԵՅ**

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ
ԸՆՏԻՐ ԹԵՅ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.1.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: